«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028ԹԹ.

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 4

1. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 5

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 9

2.1. Դպրոցի առաքելությունը 9

2.2. Գործունեության նպատակը 10

2.3. Խնդիրները 12

2.4. Սպասվելիք արդյունքները 12

2.5. Ընթացիկ և ակնկալվող աշխատանքներ 13

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ 16

3.1. Ընդհանուր դրույթներ 16

3.2. Դպրոցի կառավարումը 18

3.3. Խորհրդակցական մարմիններ 21

3.4. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները 23

3.5. Ուսումնական միջավայրը 24

3.6. Դպրոցում կրթական համակարգի առկա վիճակը և հիմնախնդիրները 26

3.7. Ուսուցիչներին ներկայացվող պահանջները 29

3.8. Սովորողների կարողությունների և հմտությունների զարգացումը 30

3.9. Իրականացման գործողությունները 31

3.10. Ուժեղ և թույլ տեղերը 32

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 35

5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 35

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ 35

7. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ 35

8. ՌԻՍԿԵՐԸ 35

9. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ 35

10. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 46

11. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ 48

12. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 49

13. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 50

13.1. Հաշվետու ժամանակաշրջանում հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը . 54
14. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ՄԵՐ ԱՌՕՐՅԱՅԻՑ..... 74

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:
/ ՀՀ Սահմանադրություն, հոդված 38/

Երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը կրթության ոլորտի բարելավումն է:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրական, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Տևական ժամանակ է՝ իրականացվում են կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տալիս լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու կրթության զարգացման համար:

Այսօր դպրոցի գերակա խնդիրն է՝ ապահովել զարգացած, ժողովրդավար, ազատ մտածողություն դրսևորող քաղաքացու համակարգված զարգացումը՝ ապահովելով ազգային յուրահատուկ ինքնության արժեքը գնահատող քաղաքացու կայացումը:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022 թ. N 35-ն հրամանի, ինչպես նաև «Հանրակրթության մասին», «Կրթության մասին», «ՊՈԱԿ-ի մասին» օրենքների, դպրոցի Կանոնադրության, «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման Պետական ծրագիր» փաստաթղթի հիմնադրույթներին համապատասխան՝ հիմք ընդունելով 2018-2023 թթ. դպրոցի գործունեության արդյունքում ունեցած ձեռքբերումները, հաշվի առնելով դպրոցում առկա հիմնախնդիրները՝ ուղղված հաջողությունների աստիճանական զարգացմանը և խնդիրների իրատեսական ու արդյունավետ լուծմանը:

1. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական միջնակարգ ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

Դպրոցն ունի 155 երկար ու ձիգ տարիների պատմություն: 1830 թվականի գարնանը Արծափից գաղթած 70 ընտանիք հանգրվանել է Սևանա լճի ափին: Գյուղի դպրոցի պատմությունը սկիզբ է առել 1868-1869 ուսումնական տարում հիմնված եկեղեցական – ծխական դպրանոցից, մաքառելով հասել է մինչև 20-րդ դարասկիզբ և Հարություն Տեր Մինասյանի ջանքերով դարձել եռամյա երկսեռ դպրոց:

1912-1913 ուսումնական տարում դպրոցում սովորել է 150 աշակերտ:

1930-1931 թթ դպրոցն ունեցել է առաջին պետական շենքը՝ ապահովելով սկզբում՝ վեցամյա, հետո՝ յոթամյա կրթություն: 1949 թվականից դպրոցը դարձել է միջնակարգ, 1954 թվականից անվանակոչվել է հայ մեծանուն գրող Մուրացանի անունով և շարունակում է կերտել իր պատմությունը՝ հարազատ գրկում կրթելով արդեն ավելի քան 500 աշակերտ:

Դպրոցի նոր շենքը շահագործման է հանձնվել 1972 թվականին, վերանորոգվել՝ 2012-2013 թվականներին: Դպրոցը նախատեսված է 930 աշակերտի համար:

- Հանրակրթական ծրագրի իրականացման 1-ին աստիճան՝ 300 տեղով գործունեության լիցենզիա՝ Սերիա Ա N 0443, տրված 13.07.2010թ., լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ:
- Հանրակրթական ծրագրի իրականացման 2-րդ աստիճան՝ 400 տեղով գործունեության լիցենզիա՝ Սերիա Ա N 0434, տրված 13.07.2010թ., լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ:
- Հանրակրթական ծրագրի իրականացման 3-րդ աստիճան՝ 230 տեղով գործունեության լիցենզիա՝ Սերիա Ա N 0356, տրված 13.07.2010թ., լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ:

Դպրոցն անցել է կրթական երկար ճանապարհ, որի ընթացքում նրա աշակերտները դարձել են կրթօջախի պետության համար վաստակաշատ ու անվանի մարդիկ:

Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցը 2002 թ-ից դարձել է ՊՈԱԿ /պետական ոչ առևտրային կազմակերպություն/, պետական ռեգիստրում գրանցված է 13.01.2003թ. թիվ 8721000983, վկայական ՆԲ 000777, ծածկագիր 1000 7093:

- ✓ Հաստատության տեսակը՝ միջնակարգ հանրակրթական դպրոց
- ✓ ՀՎՀՀ՝ 08606359
- ✓ Հ/Հ՝ 900168000157
- ✓ Սպասարկող բանկը՝ աշխատակցի ընտրությամբ
- ✓ Տնօրեն՝ Արտուշ Հայրապետյան

- ✓ Աշխատողներ՝ 71
- ✓ Կազմակերպա-իրավական տեսակը՝ Ոչ առևտրային
- ✓ Հարկայնությունը՝ եռահարկ
- ✓ Թեքահարթակ՝ 1
- ✓ Ջեռուցման եղանակը՝ Լոկալ ջեռուցում (բնական գազ)
- ✓ Լաբորատորիա՝ 2
- ✓ Առարկայական սենյակ՝ 5
- ✓ Համակարգչային սենյակ՝ 2
- ✓ Աշխատանքի ուսուցման՝ տեխնոլոգիայի կաբինետ՝ 2
- ✓ «Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝ 1
- ✓ Նախնական զինպատրաստության՝ 1
- ✓ Բուժսենյակ՝ 1
- ✓ Ուսուցչանոց՝ 1
- ✓ Բացօթյա մարզահրապարակ՝ 1
- ✓ Ֆուտբոլի հրապարակ (փոքր)՝ 1/նորակառույց/
- ✓ Մարզադահլիճ՝ 1/վերանորոգված/
- ✓ Դասարանների թիվը՝ 24
- ✓ Գրադարանի ֆոնդը՝ 5347 կտոր գիրք
- ✓ Աշակերտների թիվը՝ 529

1. Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ: Կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2010թ-ի օգոստոսի 27-ի թիվ 405-Ա որոշումով, փոփոխությունների է ենթարկվել 25.10.2017թ-ի 255-Ա և 9.10.2020թ-ի թիվ 426-Ա որոշումներով:
2. Դպրոցի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովագյուղ, 24-րդ փ. 5-րդ նրբ. 70 շ.:
3. Էլեկտրոնային փոստ՝ tsovagyugh@schools.am:
4. Կայք՝ tsovagyugh.schoolsite.am:
5. Դպրոցը միահերթ է և աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով: Բարեկարգ է, հարմարավետ, կառուցված է տեսարժան վայրում՝ հայացքը՝ Սևանա լճին: Ձմռանը տաք է, ամռանը՝ զով: Մեր դպրոցը խաղաղ, բարի մի կրթօջախ է՝ իր համերաշխ կոլեկտիվով:

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գ-1. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի շենքի տիպը	տիպային	X	հարմարեցված		ժամանակավոր		
Հարկայնությունը	1 հարկանի		2 հարկանի		3 հարկանի	X	4 և ավելի հարկանի
Շենքի նախագծային հզորությունը (նախատեսված աշակերտական տեղերի քանակը)	964	Փաստացի հաճախող երեխաների թիվը	536				
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը	1972	Շենքի ընդհանուր մակերեսը, քառ.մ	≈ 5000				
Դպրոցը համայնքի տարածքում միակն է	այո	X	ոչ		Հեռավորությունը ամենամոտ դպրոցից (մոտակա բանուկ ճանապարհով, ***մետրով***)	645	
Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը, քառ.մ		Դպրոցին կից տարածքի մակերեսը, քառ. մ	≈ 9000				
Վարձակալության տրված տարածք, քառ. մ		Վարձակալությամբ վերցված տարածք, քառ. մ					
Բնակեցված (զբաղեցրած) սենյակների քանակը		Դրանց ընդհանուր մակերեսը, քառ.մ					

Տարածքների անվանումները		Քանակը	Ընդհանուր մակերեսը, քառ. մ	Փաստացի գործողների քանակը	Դրանց ընդհանուր մակերեսը, քառ.մ
Առանձնասենյակ		10	270	10	270
Դասասենյակ		8	432	8	432
Լաբորատորիա		2	108	2	108
Առարկայական սենյակ (կաբինետ)		19	972	18	918
դրանցից՝	համակարգչային	2	72	2	72
	նախնական զինպատրաստության	1	54	1	54
	հրաձգարան				
Ձենքի պահեստ		1	16	1	16
Արհեստագործական սենյակ		3	144	3	144
Սպորտդահլիճ		1	300	1	300
Բացօթյա սպորտհրապարակ		1	5400	1	5400
Նիստերի դահլիճ		1	300	1	300
Ճաշարան կամ բուֆետ		1	108	1	108
Բուժսենյակ		1	16	1	16
Զուգարան		15	162	15	162
Լոգարան					
Լողավազան					
Հանդերձարան		2	78	2	78
Ապաստարան					
Գրադարան		1	54	1	54
Նկուղ					
Տեխնիկական նշանակության սենյակ		4	25	4	25
Այլ նշանակության	պահեստարան	1	9	1	9
	պահեստարան	10	124	10	124
Հանրակացարանային սենյակներ					
դրանցում մահճակալների քանակը			դրանցից օգտագործվում են		

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ 6 / 01.01.2023թ.

N	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (մ/ քառ.)	Ծավալը (մ/ խոր.)	Այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6
1	Շենքեր	1	4500	13500	
2	Առանձնասենյակներ	6	180	540	
3	Դասարաններ	24	1224	3672	
4	Առարկայական լսարաններ	7	396	1188	
5	Լաբորատորիաներ	2	198	594	
6	Արհեստանոցներ	2	162	486	
7	Մարզադահլիճներ	1	360	1080	
8	Գրադարան(ներ)	1	144	432	
9	Բուժկետ	1	18	54	
10	Ճաշարան	1	144	432	
11	Հանդերձարան(ներ)				
12	Զուգարան(ներ)	19	108	324	
13	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ	5	100	300	
14	Մարզահրապարակ(ներ)	1	5400	16200	
15	Հանրակացարաններ				
16	Ննջասենյակներ				
17	Համակարգիչներ	45			
18	Համակարգչային այլ տեխնիկա	11			
19	Հեռախոսներ				
20	Ցեռուցվող տարածքներ				
21	Ցեռուցման տեսակը	գազ	5000	15000	
22	Ցեռուցման օրերը				
23	Տրանսպորտային միջոցներ				
24	Մրգատու այգիներ				
25	Դեկորատիվ բուսական հողամասեր				
26	Շենքերի ներսի մաքրվող մակերեսներ		5000	15000	
27	Շենքերի դրսի մաքրվող մակերեսներ		1500	4500	
28	Սան. հանգույց. մաքրվող մակերեսներ	19	200	600	

Տնօրեն՝ Ա. Հայրապետյան Կ.Տ. Հաշվապահ՝ Ն. Մադաթյան

8

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս կարևոր եմ համարել հետևյալ հաջորդական քայլերը.

- ծրագրային նպատակները, խնդիրներն ու միջոցառումները սահմանելուց հետո՝ գործունեության փուլային պլանավորում՝
  1) դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում,
  2) ծրագրի իրականացման հնարավորությունների, ֆինանսական, կադրային և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում, գնահատում,
  3) ծրագրերի իրականացմանն ուղղված գործողությունների նախատեսում,
- սահմանել եմ դպրոցի առաքելությունը,
- վերլուծել եմ առկա իրավիճակը, նշել ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել եմ եղած հիմնախնդիրները,
- սահմանել եմ զարգացման հիմնական նպատակներն ու դրանից բխող խնդիրները,
- սահմանել եմ դպրոցի զարգացման գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և նյութական միջոցներ,
- ձևակերպել եմ ծրագրի ակնկալվող արդյունքները։

2.1. Դպրոցի առաքելությունը

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

- Մատուցել միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ և մրցունակ կրթական ծառայություններ:
- Բացահայտել և զարգացնել յուրաքանչյուր աշակերտի ընդունակությունները:
- Սովորողների մեջ սերմանել մշտական ինքնակատարելագործման գիտակցում և ձգտում:
- Ստեղծել պայմաններ ազատ, ֆիզիկապես առողջ, մտավոր զարգացած անհատի ձևավորման համար, ով ընդունակ կլինի շարունակելու կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատությունում:
- Ստեղծել դպրոցական ներառական համակարգ, ուր յուրաքնչյուր երեխայի համար ապահովված լինի կրթության մեջ առավելագույն ընդգրկվածություն, հավասար մասնակցություն, ուսումնառության մատչելիություն և որակյալ կրթություն՝ կարևորելով յուրաքանչյուրի անհատական կարողունակությունները, որտեղ սովորողը իրեն կզգա անկաշկանդ, ազատ ու ապահով:
- Նպաստել համաշխարհային մշակույթին ծանոթ քաղաքացու ձևավորմանը՝ օտար լեզուների խորացված ուսուցման միջոցով:

- Ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող ուսումնառություն:

Ստեղծել կրթական, մշակութային, մարզաառողջարարական կենտրոն, միջավայր, որ երեխաները ստանան որակյալ կրթություն և պատրաստ լինեն ժամանակաշրջանի մարտահրավերներին:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ քաղաքացիական առողջ հասարակության համար:

Առաքելությունն այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն շարունակական բնույթի է: Առաքելության իրականացման վրա էական ազդեցություն ունեն ներքին և արտաքին գործոնները: Ներքին գործոնների թվին են պատկանում դպրոցի ավանդույթները, մանկավարժական աշխատակազմի փորձը, դպրոցի առկա ռեսուրսները: Արտաքին գործոններից են պետության կրթական քաղաքականության առանձնահատկությունները, սովորողների կրթական կարիքները, համայնքի առանձնահատկությունները և այլն:

Դպրոցի ամբողջ անձնակազմի առջև դրվելու է մի տեսլական, այնպիսի մի նշաձող, որին կարողանալու ենք հասնել միացյալ ուժերով, այն է՝ սովորել, սովորեցնել և տալ այնպիսի գիտելիքներ, որ երեխաները կարողանան իրենց ստացած գիտելիքները կիրառել ողջ կյանքի ընթացքում, քանզի *«իմաստունը նա չէ, ով շատ գիտի, այլ նա, ում գիտելիքները օգտակար են»:/Էքիլեա/:*

Տեսլականը

Որակյալ կրթության ապահովում բոլոր աշակերտների համար:

Համոզմունքներ

Փոփոխությունները հնարավորություններ են ստեղծում, իսկ բարձր կատարողականը՝ տեսլականները իրականություն է դարձնում:

2.2. Գործունեության նպատակը

Դպրոցը իր գործունեությունը իրականացնում է ղեկավարվելով «Երեխաների պաշտպանության մասին» ՀՀ Օրենքի համապատասխան դրույթներով.համաձայն որի՝ դպրոցը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար, և յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ստանալու միջնակարգ անվճար կրթություն:

Դպրոցում իրականացվում են արտադպրոցական, մանկապատանեկան, մշակութային, մարզական, հանգստի և առողջության ամրապնդմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ:

Դպրոցում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անվերապահորեն հետևել եմ և հետևելու եմ, որպեսզի պաշտպանված լինեն երեխաների բոլոր իրավունքները և ինչպես մինչև հիմա, այնպես էլ հետագայում պարբերաբար տեղեկանալու եմ դասղեկներից և պարապող ուսուցիչներից աշակերտների հոգեկան և ֆիզիկական դրություններից, անելու եմ ամեն բան աշակերտներին ցանկացած բռնությունից զերծ պահելու համար:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ՝ ուսուցման արդյունքներ, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում: Եվ դրա համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները՝

- Ապահովել սովորողների կրթական կարիքների բավարարումը՝ ղեկավարվելով հանրակրթության պետական չափորոշիչներով. ուսուցումը կազմակերպել սովորողների նախասիրություններին համապատասխան:
- Ստեղծել ապահով, անվտանգ և հարմարավետ միջավայր բարելավել շենքային պայմանները:
- Կերտել միասին սովորելու, աշխատելու, ապրելու կանոններ:
- Սովորողին տալ մասնագիտական կողմնորոշում:
- Նպաստել միջնակարգ դպրոցի մեխանիզմների և ընթացակարգերի կատարելագործմանը և համագործակցային ուսուցմանը:
- Զարգացնել հաղորդակցական հմտությունները, ձևավորել բարոյական արժեքները:
- Ձևավորել սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով նկարագրված կարողունակություններ:
- Ունենալ ժամանակակից լաբորատորիաներ, ապահովել գրադարանի արդյունավետությունը, թվայնացնել գրադարանային ֆոնդը:
- Կարևորել ուսուցչի, ընտանիքի, գյուղի դերը որակյալ կրթության իրավունքի իրացման գործում:
- Բոլոր սովորողներին զինել էկոլոգիական կրթության միջոցով հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով:
- Ստեղծել երկարօրյա դպրոց: Դպրոցը դարձնել գյուղի մշակութային, սպորտային համալիր դաստիարակության և զբաղվածության կենտրոն:
- Քարտեզագրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին, նրանց բերել դպրոց /եթե չեն հաճախում դպրոց/, նրանց համար ստեղծել հարմարավետ միջավայր, պարապմունքների սենյակներ: Դասասենյակներում և դպրոցում նրանց կարիքներին համապատասխան միջավայր ստեղծել:
- Ապահովել համացանցի որակյալ հասանելիությամբ կահավորված և ՏՀՏ-ներով զինված դասասենյակներ, համակարգիչներ տրամադրել նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին:

2.3. Խնդիրները

- Քարտեզագրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին /եթե նրանք չեն հաճախում դպրոց, բերել դպրոց/, իրականացնել նրանց սոցիալականացումը:
- Համակարգիչների և ժամանակակից տեխնոլոգիաների շարունակական ձեռքբերում:
- Աշակերտական գույքի, պահարանների և ժամանակակից լաբորատոր սարքավորումների ձեռք բերում, արդիականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան:
- Զարգացնել սովորողների կարողունակությունները:
- Բարելավել դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցությունը:
- Ուշադրության կենտրոնում պահել սովորողների համակողմանի դաստիարակությունը:
- Ձևավորել սովորողի անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր, հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները:
- Մոնտաժել հակահրդեհային ինքնաշխատ սարքավորումներ և հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման համակարգ՝ ապահովելով հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցումը լիազոր մարմնի՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայությանը («911» ծառայությանը):
- Կենտրոնացնել առկա ռեսուրսները և առավել արդյունավետ տնօրինել դրանք:
- Դպրոցը դարձնել համայնքային զարգացման կենտրոն:

2.4. Սպասվելիք արդյունքները

- Լինել մրցունակ, օրինակելի, սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց՝ ծառայելով իր առաքելությանը:
- Ձևավորել քննադատական մտածողություն ունեցող քաղաքացիներ:
- Աջակցել սովորողներին՝ մասնագիտական կողմնորոշվածության հարցում:

Ակնկալվող արդյունքներն ապահովելու համար պետք է խթանել ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքը, ապահովել նրանց մասնակցությունը ընթացիկ վերապատրաստումներին, ուղղորդել ուսուցիչներին՝ մասնակցելու կամավոր ատեստավորմանը, դպրոցը համալրել հզոր ներուժով՝ երիտասարդ, հմուտ և կրթված ուսուցիչներով: Ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովել սերնդափոխության սահուն ընթացք: 2023 թվականին դպրոցից կամավոր ատեստավորմանը հայտագրվել են ութ ուսուցիչ: Աշխատանք եմ տանելու յուրաքանչյուր հաջորդ տարին մեծացնել կամավոր ատեստավորմանը մասնակցողների թիվը:

2.5. Ընթացիկ և ակնկալվող աշխատանքներ

«Վորլդ Վիժըն» բարեգործական կազմակերպությունն արդեն երկար տարիներ դպրոցի կողքին է: Կազմակերպության ջանքերով իրականացվել են դպրոցական և արտադպրոցական բազմաթիվ միջոցառումներ: «Վորլդ Վիժըն»-ի կողմից դպրոցն ստացել է տպիչներ, գրքեր, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիայի գույք, պրոյեկտոր, ձայնարկիչներ, բարձրախոսներ: Կորոնավիրուսի համաճարակի ժամանակ ևս «Վորլդ Վիժըն»-ը դպրոցի կողքին էր և տրամադրեց անհրաժեշտ հակահամաճարակային պարագաներ: «Վորլդ Վիժըն»-ի նախաձեռնությամբ դպրոցում գործում է «Բանավեճի ակումբ» խմբակը, որին մասնակցող սովորողները հանրապետության տարբեր դպրոցներում բանավեճի սեղանի շուրջ քննարկել են կրթության ոլորտին վերաբերող բազմաթիվ հարցեր: «Վորլդ Վիժըն»-ը կազմակերպել է ամառային ճամբարներ, ուր ընդգրկվել են դպրոցից շատերը:

2022թ. դպրոցը համագործակցում է «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի «Սևանի ընկերներ» կազմակերպության հետ: Աշխարհագրության ուսուցիչները և մի խումբ աշակերտներ պարբերաբար մասնակցում են Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրներին նվիրված միջոցառումներին, «Սևանի ընկերներ» ծրագրին, որի նպատակն է երիտասարդների շրջանում բարձրացնել Սևանա լճի հիմնախնդիրների և լուծումների մասին իրազեկությունն ու նպաստել վարքագծի փոփոխությանը:

2022թ. դպրոցի սաները մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ «ԴԻ-ՎԻ-ՎԻ ինթերնեյշնալ» հայաստանյան գրասենյակի կողմից իրականացրած «ԿՁՆ կանգառ Սևանում» երիտասարդական ֆորումին:

2022 թ մարտ ամսին ավագ դպրոցից 13 աշակերտ մասնակցել են ՀՊՄՀ –ի 100-ամյակի առթիվ կազմակերպված օլիմպիադայի երեք փուլերին:

2022թ հունիսի 1-ին Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում դպրոցի 5 աշակերտ հանդես են եկել «Երեխայի իրավունքները երեխաների աչքերով» զեկույցով:

2021թ մայիսին աշակերտները մասնակցել են «ԵՄ – Ն հանուն երիտասարդության՝ բանիմաց և ակտիվ երիտասարդներ հանուն ժողովրդավար Հայատանի՝ այսօր և վաղը» ծրագրին և ստացել շնորհակալագրեր ու պատվոգրեր:

Դպրոցը սիրով աշխատել և շարունակում է աշխատել հասարակական և բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ: «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» (ՏԶՀԿ) հասարակական կազմակերպության հետ դպրոցը համաձայնության է եկել նախկին կաթսայատան առանձին մեկ հարկանի դատարկ շինությունը դարձնել « Համայնքային նորարարական ուսումնացուցադրական կենտրոն», ուր սովորողները կստանան բնապահպանության, բուսաբուծության, համայնքային զարգացման և սոցիալական ձեռնարկատիրության թեմաներով անվճար և պրակտիկ ուսուցում անցնելու հնարավորություն: Համագործակցության արդյունքում նախատեսվում է տարածքը դարձնել

ժամանակակից էներգաարդյունավետության ստանդարտներին համապատասխան շինություն՝ որպես ցուցադրական օրինակ և դպրոց-հյուրատուն։

2018-2023 թվականներին դպրոցի շենքային պայմանների բարեկարգման աշխատանքները շարունակական են եղել։ Կատարվել են բազմաթիվ աշխատանքներ։ Կիսատ է մնացել դպրոցի տարրական մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքի հատակի սալիկապատման ծրագիրը, ինչպես նաև դասվարների համար աշխատասենյակ առանձնացնելու ծրագիրը. լիազոր մարմնի կողմից թույլտվություն ստանալու պարագայում նախատեսել եմ տարրական մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքի հատակը սալիկապատել և միջանցքի լայն մասից մի հատված առանձնացնել՝ դասվարների համար աշխատասենյակ ձևավորելու նպատակով։

2026-2027 ուսումնական տարվանից դասարանների կազմավորման համար նախատեսվում է պարտադիր դարձնել տարրական և միջին մակարդակում առավելագույնը 25 և ավագ մակարդակում՝ առավելագույնը 20 սովորող ունենալը։ Աշակերտների թվի աճով պայմանավորված և դպրոցում դասարանների քանակի ավելացման հետևանքով առաջանում է դասարանների տեղավորման խնդիր և դասասենյակների պակաս։ Քանի որ 2023թ մարտի 20-ին «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի հետ կնքվել է դրամաշնորհային պայմանագիր՝ Նախադպրոցական կրթության միկրոծրագիր իրականացնելու նպատակով և տարրական մասնաշենքից երկու դասարան և մեկ աշխատասենյակ հատկացվել է նախակրթարանին, այդ պատճառով ևս պակասել են դասասենյակները և այդ մասնաշենքի ուսուցիչների աշխատասենյակը ուստի անհրաժեշտություն է առաջանում ավելացնել դասասենյակների թիվը։ Առաջիկայում սպասվում է երեխաների թվի աճ. 2017 թվականին ծնված երեխաների թիվը 62 է, 2020 թվականին ծնված երեխաների թիվը՝ 83։

2026-2027 ուսումնական տարում առաջին դասարանցիների թիվը կազմում է 83, որի պարագայում ձևավորվելու է 4 դասարան։ 2023թ. դրությամբ Սևան համայնքի գյուղական բնակավայրերից Ծովագյուղը բնակչության թվով առաջիններից է, հետագայում ակնկալվում է երեխաների թվի աճ, ինչը թելադրում է դպրոցի նոր մասնաշենքի կառուցում՝ ապաստարանով, քանի որ դպրոցը չունի ապաստարան, իսկ հաշվի առնելով նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի աշխարհագրական դիրքը, դպրոցում ապաստարան ունենալը անհրաժեշտ է։ Դպրոցում առկա են տեխնոլոգիայի 2, համակարգչային 2 դասասենյակներ, երգի և շախմատի դասասենյակներ, գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան։ Օտար լեզու, ինֆորմատիկա, հայոց լեզու կիսվող առարկաների համար ևս դասասենյակների պակաս լինելու խնդիր է առաջանում։

Վերոնշյալ խնդիրների պատճառով նախատեսում եմ դիմել լիազոր մարմնին և հիմնադրին՝ թույլտվություն խնդրել նոր մասնաշենք (իր ապաստարանով) կառուցելու համար և ակնկալել պետության, համայնքի աջակցությունը։

«Վորլդ Վիժըն»- ի կողմից դպրոցի հարակից տարածքում տեղադրվել է ջերմոց, սակայն այն դեռ չի գործարկվել։ Նախատեսվում է դպրոցի աշխատակիցների և աշակերտների ջանքերով ջերմոցում աշխատանքներ կատարել, ինչպես նաև դպրոցի շրջակայքում տնկել վարդերի տնկիներ, պտղատու ծառեր, հիմնել այգի։

2023-2024 ուսումնական տարվա խմբակների գործունեության համար 8 ուսուցիչներ խմբակների ծրագրեր են կազմել և ներկայացրել ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը: Այս ծրագրի շրջանակում ներկայացվել է «Մեղվաբուծություն» խմբակի ծրագիրը, որի գործունեության ընթացքում նախատեսվում է ձեռք բերել մեղվի փեթակներ և աշակերտներին սովորեցնել մեղվաբուծություն:

«Օհմ էներջի» կազմակերպության միջնորդությամբ 2022թ մարտի 2-ին UAB ,,Solet Technies" vardu /On behalf of UAB ,,Solet Technies" կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր դպրոցում արևային համակարգ տեղադրելու մասին՝ որպես այլընտրանքային էլեկտրաէներգիայի ստացման աղբյուր: Քանի որ տարեկան մոտ տասը միլիոն դրամ հատկացվում է դպրոցի լոկալ ջեռուցմանը և հոսանքի ծախսին: Դպրոցի ֆինանսական միջոցները խնայելու և մշտական էներգիա ունենալու նպատակով սկսվել է համագործակցությունը «Օհմ էներջի» կազմակերպության հետ: Կատարվել է ուսումնասիրություն, կարգավորվել են փաստաթղթերը, արդեն դպրոցում տեղադրվել են արևային վահանակները, ընթանում են միացման աշխատանքները:

Նախագծված աշխատանքների թվում է դպրոցում «Թումո» կրթական կենտրոնի հիմնումը: ՀՀ կառավարության 11.05.2023թ. N712-Ա որոշմամբ դպրոցից 150քմ տարածք է հատկացվել «Թումո» կրթական կենտրոնի բացման համար, ինչը ժամանակի պահանջ է և 21-րդ դարի քաղաքացի ձևավորելու կարևորագույն բաղադրիչ: *«Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակի շունչը դարձիր, /Ե. Չարենց/»*

Կրթության բնագավառում սահմանված է առանձին և շատ կարևոր նպատակ՝ ապահովել ներառական ու ծրագրավորված որակյալ կրթություն և խթանել կրթության հնարավորությունները բոլորի համար ողջ կյանքի ընթացքում:

Դպրոցի առջև խնդիր է դրված ձևավորել ողջ կյանքի համար կիրառելի գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, արժեհամակարգով օժտված անհատներ:

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

3.1. Ընդհանուր դրույթներ

Դպրոցի ուսուցիչների թիվը	42
Դպրոցում մինչև 5 տարի ստաժ ունեցող ուսուցիչների թիվը	2
5-10 տարի ստաժ ունեցողների թիվը	1
10-20 տարի ստաժ ունեցողների թիվը	7
20 և ավելի տարի ստաժ ունեցողների թիվը	32
Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը	33
Բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների թիվը	1
Միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը	6
Վարչական աշխատողների թիվը	4
Մանկավարժական այլ աշխատողներ (գրադարանավար, լաբորանտ)	4
Գլխավոր հաշվապահ	1
Մանկավարժական աշխատողներ (ՍԴԱԿ, հոգեբան, ուսուցչի օգնական, զինղեկ, հատուկ մանկավարժ, սացմանկավարժ)	11
Ոչ ուսուցչական (ոչ մանկավարժական) աշխատողներ (համակարգչի օպերատոր, գործավար, պահակ, հավաքարար)	**9**
Ձմեռային սեզոնի աշխատողներ (հնոցապահ)	**4**
Տարակարգ ունեցող ուսուցիչների ընդհանուր թիվը	1
Միջազգային ու հանրապետական գիտամանկավարժական պարբերականներում /ամսագրերում/, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանում հոդվածներ, մասնագիտակ. հրապարակումներ ունեցող ուսուցիչների թիվը	22
Դպրոցի գործընկեր հայկական և արտասահմանյան կազմակերպություններ	«Վորլդ Վիժն Հայաստան», ԿՏԱԿ, ՄԱԿ, ՏՄԱԿ, «Օհմ Էներջի» ընկերություն «Ջինիշյան հիմնադրամ» «Շրջակա միջավայր և

	առողջություն» ՀԿ

Դպրոցի արդյունավետ համագործակցությունը համայնքի, կրթական կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.



Սովորողների շարժը.

	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
Սովորողների ընդհանուր թիվը ուստարվա սկզբին	**512**	**533**	**517**	**534**	**529**

Սովորողների շարժը դիագրամի տեսքով.



2023-2024 ուստարում սպասվում է սովորողների թվի զգալի աճ, քանի որ ըստ նախնական տվյալների 9-րդ դասարանն ավարտող սովորողներից այլ ուսումնական հաստատություններ գնացողների թիվը չի գերազանցում 6-ը, իսկ 12-րդ դասարանն ավարտել են 24 աշակերտներ, և սեպտեմբերին առաջին դասարան են ընդունվել 55 աշակերտ:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի և այլ ռեսուրսների համեմատական նկարագրում հաշվետու ժամանակաշրջանում (վերագնահատում՝ 30.03.2018թ)՝

	2018 /հազար դրամ/	2023 /հազար դրամ/	Ավելացել է /հազար դրամ/
Հիմնական գույք	14430000	31692300	17262300
Շրջանառու գույք	4450372	8161702	3711330
Ընդամենը	18880372	39854002	20973630

3.2. Դպրոցի կառավարումը

ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացվում է դպրոցի կառավարումը:

Դպրոցի կառավարման որակը բարձրացնելու համար պետք է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը: Անհարաժեշտ է զարգացնել ժողովրդավար, մասնակցային, թափանցիկ կառավարումը:



Դպրոցի կանոնադրության համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նախարարությունը, տարածքային կառավարման լիազոր մարմինը, կոլեգիալ կառավարման միացյալ խորհուրդը, գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը:

Դպրոցի կանոնադրությունը, մշակվելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի և օրինակելի կանոնադրության հիման վրա, սահմանել է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործառույթները:

Դպրոցը սերտորեն համագործակցում է կառավարման և խորհրդակցական մարմինների հետ: Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունենում դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման աշխատանքներում՝ նպաստելով ֆինանսական միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործմանը:

Կառավարման միացյալ խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում,

պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

Սահմանված կարգով ձևավորվել և գործում է հաստատության խորհուրդը՝ ներքոհիշյալ կազմով.

Անուն, ազգանուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը (բարձրագույն, միջին մասնագիտական)	Ո՞ւմ կողմից է առաջադրվել	Աշխատանքային տաժը տվյալ դպրոցում	Ո՞ր թվականից է խորհրդի անդամ
1. Ջանիկյան Դավիթ Ռոբերտի	19.08.1992	<<Գազպրոմ Արմենիա>>ՓԲԸ բաժնի պետ	Բարձրագույն	ՏԻՄ		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
2. Մկրտչյան Արմինե Զավենի	23.11.1975	<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Բարձրագույն	Մանկավարժական խորհուրդ	22տարի	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
3. Գևորգյան Հերմինե Ռոմելի	27.11.1987	<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ ուսուցիչ	Բարձրագույն	Մանկավարժական խորհուրդ	15տարի	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
4. Գևորգյան Նելլի Նորիկի	05.09.1985	Չի աշխատում	Միջնակարգ	Դպրոցի ծնողական խորհուրդ		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
5. Պետրոսյան Գուրգեն Լևիկի	20.08.1976	Անհատական գործունեություն	միջնակարգ	Վերադաս		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
6. Վարդանյան Տիգրան Ավետիքի	11.08.1971	«Արա-Սուրեն» ՍՊԸ	Միջին մասնագիտական	ԿԳՄՍ		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
7.Մելոյան Օվկիան Գևորգի	24.11.1971	«Կապուտակ Սևան » հյուրանոցային համալիր	Միջին մասնագիտական	Վերադաս		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա
8. Պետրոսյան Կարեն Հայրապետի	02.06.1986	<<ՀԷՑ Սևանի մասնաճյուղ >>ՓԲԸ	Միջն մասնագիտական	Դպրոցի ծնողական խորհուրդ		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 27.09.2022N245-Ա
9.Գևորգյան Հովիկ Մամիկոնի	02.01.1978	<<Սևան ազգային >>ՊՈԱԿ	Միջնակարգ	Վերադաս		ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա

3.3. Խորհրդակցական մարմիններ

Ծովագյուղի միջնակարգ դպրոցում՝ համաձայն Կանոնադրության գործում են հետևյալ խորհրդակցական մարմինները, որոնք միտված են կրթական գործունեության արդյունավետ կազմակերպմանը, զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ լիարժեք համագործակցությանը:



<u>Մանկավարժական խորհուրդ.</u>

Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստում: Ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

Մանկավարժական խորհուրդը ԿԳՄՍ նախարարության սահմանած կարգով՝ իր կազմից, փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում է դպրոցի կառավարման խորհրդի անդամներ:

Մանկավարժական խորհուրդը կատարում է դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները (քննարկումներ, որոշումներ)։ Նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ։ Անդամներ են համարվում դպրոցի բոլոր մանկավարժները։ Խորհրդի նիստերը բաց են և պարբերաբար նիստերին մասնակցում են ծնողական և աշակերտական խորհրդի նախագահները և այլ անդամներ։ Քննարկում և որոշումներ են ընդունում ուսումնադաստիարակչական, զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում ընթացիկ հարցերին և ընդհանուր պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար։

Աշակերտական խորհուրդ.

Սահմանված կարգով հաստատությունում յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր ամսին ձևավորվում է ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված աշակերտական խորհուրդը, որը ստեղծվում է ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան։ Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս առաջարկություններով, մասնակցում ներքին կարգապահական կանոնների իրականացման գործընթացին, հետևողական է լինում սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր։ Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին։ Անչափ կարևորում ենք աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը։ Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին։ Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարվում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը։

Ծնողական խորհուրդ.

Դպրոցի ծնողխորհուրդը գործում է համաձայն դպրոցի կանոնադրության։ Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին դասարանական ծնողխորհրդի նախագահներից ձևավորվում է դպրոցի ծնողխորհուրդը, որոնցից էլ ընտրվում է ծնողխորհրդի նախագահը։ Այս խորհրդակցական մարմինը նպաստում է կրթական գործունեության արդյունավետ կազմակերպմանը։ Ծնողխորհուրդը ակտիվ մասնակցություն է ունենում արտադպրոցական նախաձեռնությունների կազմակերպմանն ու անցկացմանը, աջակցում է դասվար-դասղեկներին էքսկուրսիաների կազմակերպման, անապահով ընտանիքների սովորողներին օգնություն ցուցաբերելու և դասարաններում առկա խնդիրները վերհանելու գործում։ Դպրոցում անհրաժեշտությունից ելնելով ծնողների կողմից իրականացվում են դասալսումներ։

Սովորողների կրթության գործում մեծ է ծնողի դերը։ Ծնողների հետ տարվող աշխատանքում կձեռնարկեմ հետևյալ միջոցառումները

Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադասիարակչական աշխատանքների մասին։

Ծնողներին ներգրավել դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպմանը, արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին։

Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը։

Ծնողներին ներգրավել երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում։

Ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ, փորձել միասին գտնել խնդիրների լուծման ուղիներ, գործել բաց, թափանցիկ։

Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, կինոդիտումներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ։

3.4. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

Կրթական գործընթացի ապահովման տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, որոնց կիրառմանը հասել ենք մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործման շնորհիվ, նպաստել է արդյունավետ ուսումնառության կազմակերպմանը:

Հաստատության աշխատակիցների կողմից դպրոցի տեղեկատվական բազայի մուտքագրումը և համակարգչայնացումը նպաստում է հաստատության գործունեության նորացմանը:

Դպրոցում ստեղծվել և լիարժեքորեն գործում է ինտերակտիվ ուսուցման դասասենյակը՝ ինտերակտիվ գրատախտակ-պրոյեկտորով և համակարգչային կաբինետը՝ համալրված 16 /տասնվեց/ Pentium 4 և 22 դյուրակիր /նոութբուքեր/ համակարգիչներով, NetLine-ի կողմից անվճար տրամադրված գերարագ ինտերնետով, որոնք հնարավորություն են տալիս յուրաքանչյուր մասնակցի ներգրավել աշխատանքի մեջ՝ առանց նախնական պատրաստվածության, նպաստում են ակտիվ ուսումնառության կազմակերպմանը, ուսուցիչների փորձի փոխանակմանը, արդյունավետ են և օգտակար խորհրդակցությունների, սեմինարների համար:

Դպրոցում գործում է նաև «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, ուր հաճախում են ոչ միայն դպրոցի, այլ նաև ուրիշ հաստատությունների սովորողներ: Խմբակն ունի շոշափելի ձեռքբերումներ:

Հաստատությունն ուսումնադաստիարակչական աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշտապես օգտվում է ներքոհիշյալ կայքերից՝

1. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ https://www.ktak.am/
2. «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ՝ https://kznakhimnadram.blogspot.com
3. «Հայկական կրթական միջավայր» պորտալ՝ http://www.armedu.am/
4. «Պաշարների շտեմարան»՝ http://lib.armedu.am/
5. «Հեռավար ուսուցում» համակարգ՝ http://learning.armedu.am/
6. «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»՝ http://esource.armedu.am/

Տեղեկատվական տեխնոլոգիաների նշանակությունը չափազանց կարևոր է՝ որպես ուսումնառության հիմնական միջոց, իսկ «Ինֆորմատիկան»՝ որպես ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը նպաստող առարկա: Տեղեկատվական տեխնոլոգիաների ու ինտերնետային միջավայրի օգտագործման շնորհիվ կիրառվող նորարարությունները պայման են ստեղծել 2016 թվականից հաստատությունում ներդնելու էլեկտրոնային դասամատյանի և օրագրի տարբերակը՝ ապահովելով սահմանված կարգը:

Շնորհիվ ՏՏ-ի նպատակային կիրառման՝ դպրոցի գործունեության և աշակերտների առաջադիմության վերաբերյալ պարբերական հաշվետվությունները, արտաքին և ներքին գնահատման արդյունքները տեղադրվել են դպրոցի կայքէջում՝ ապահովելով աշակերտների ուսուցման և դպրոցի գործունեության թափանցիկությունը:

3.5. Ուսումնական միջավայրը

Դպրոցը հնարավորություն է ստեղծում և հորդորում է ուսուցիչներին՝ անընդհատ ինքնակրթվել, երեխաների կրթության և դաստիարակությանն առնչվող կարծրատիպերից ազատ մտածել, երեխաների մեջ ձևավորել քննադատական մտածողություն, տարբեր իրավիճակներից դասեր քաղել, կարողանալ արդյունքները վերլուծել, ձևավորել արդյունավետ համագործակցության հմտություններ, խթանել սովորողների ստեղծագործական միտքը և անսահման երևակայությունը, կրթական արդի միտումների և զարգացումների մասին համապարփակ տեղեկատվություն տարածել, տիրապետել մեծը տեսնելու կարողությանը, սահմանել համապատասխան իրատեսական գործողություններ:

Յուրաքանչյուր մարդ կարևորվելու մեծ պահանջմունք ունի: Մարդկանց մեծամասնության համար անհատական արժեքորումն ու կարևորության գնահատումը նյութական կարգավիճակից ավելի կարևոր են: Հաճախ այս հիմնական պահանջմունքը սխալմամբ նույնացվում է մարդու կարգավիճակն ընդգծող խորհրդանիշների հետ:

Տնօրենները մեծ ազդեցություն ունեն գործընկերներին արժևորելու և կարևորելու սուբյեկտիվ ընկալման, ինչպես նաև դպրոցական համայնքում նրանց արժևորման վրա: Եթե տնօրենը ուսուցչի արժևորման միջոցով դրական խթան է ստեղծում ոչ միայն ուսուցիչների, այլև ծնողների շրջանում, ապա նա ազդում է դպրոցում տիրող մթնոլորտի վրա: Արդյունքում

հնարավորություն է ստեղծվում, օրինակ, հասարակության մեծամասնության համար ավելի լավ հիմնավորել ուսուցիչների աշխատավարձի բարձրացման քաղաքական որոշումը: Ուսուցչի արժեւորումը, նրա ներգրավվածության և անձնական առաջադիմության նկատմամբ հարգանքը դպրոցի պատասխանատու կառավարման կարևոր գործիքներ են: Այդ հատկանիշների արժեւորումը կառավարման առանցքային կոմպետենցիաներից մեկն է: Սակայն արժեւորումն ու գովեստը պետք է արժանահավատ լինեն, քանի որ հակառակ դեպքում դրանց հեղինակը դառնում է անվստահելի: Դրական արժեւորման մթնոլորտի ստեղծումը ոչ միայն դպրոցի ղեկավարության գործն է, այլև անձնակազմի և դպրոցական համայնքի բոլոր անդամների, որոնք նույնպես պատասխանատու են դրա համար: Գովեստի, ճանաչման և արժեւորման միջոցով ենք իմաստավորող վարքագիծ դրսևորում: Մենք ընդգծում ենք տվյալ անձի դրական ներգործությունը և ցույց ենք տալիս նրան, թե ինչքան կարևոր է ամբողջի մեջ իր մասնակցությունը: Արժեւորումը, ճանաչումը և գովեստը պետք է լինեն որոշակի, հիմնավոր, հասկանալի, այլոց նկատմամբ արդար:

Որպես տնօրեն՝ ես աշխատել եմ այս սկզբունքով և շարունակելու եմ նույն կերպ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է հետևյալ կերպ.

Սովորողներն ակտիվ են: Բացի լսելուց՝ հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու: Բացի ուսուցիչ-աշակերտ կապից՝ գործում է աշակերտ- աշակերտ ուսուցողական կապը: Ուսուցիչը չի անցնում հաջորդ թեմային, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել թեմայի առանցքային գաղափարները: Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ: Ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ են սովորողների համար: Գիտելիքների և հմտությունների ուսուցումից զատ՝ կարևորվում է նաև արժեքների և վերաբերմունքի ուսուցումը: Ուսումնական նյութի մեջ կարևորվում է բովանդակության խորը ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ: Սովորողները ստանում են իրենց կրթական կարիքներին համապատասխանող աջակցություն: Օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ: Շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա: Գնահատականն օգտագործվում է աշակերտների առաջընթացը չափելու համար: Առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են վերառարկայական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը, համագործակցությունը:

Ուուցիչները, հմուտ, փորձառու, ստեղծագործ, ժամանակի մարտահրավերներն ընդունող և դժվարություններից չերկնչող մանկավարժներ են: ԿՏԱԿ–ի էլեկտրոնային պաշարների շտեմարանում ուսուցիչներից շատերն ունեն մասնագիտական – հետազոտական հրաշալի աշխատանքներ: Նրանց մեծ մասը ժամանակ առ ժամանակ մասնակցում է առկա և հեռավար վերապատրաստումների տարբեր դասընթացների, տիրապետում են ՏՀՏ գործիքների, ուսումնական տարվա ընթացում կիրառում են ***Google forms, (LearningApps, Office Sway, Quizizz***

Socrative, Kahoot գնահատման գործիքները, սովորեցնում են պատրաստել սահիկաշարեր, կիրառում են դասավանդման արդյունավետ մեթոդներ:

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Այսպիսով՝ շատ կարևոր է ունենալ հարմարավետ, մոտիվացնող ուսումնական միջավայր:

Ներքին գնահատման համար կատարված հարցումն ապացուցում է, որ դպրոցում չկան սովորողի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքեր: Երեխաները, ինչպես և նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում իրենք լավ պաշտպանված են, դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը: Խստորեն վերահսկվում են բացակայությունները, ճշտվում ախտորոշումները: Պահպանվում են հակահամաճարակային կանոնները: Ախտահանվում են դասասենյակները: Դպրոցը սերտ համագործակցում է Ծովագյուղ գյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոնի հետ, բնագիտական որոշ առարկաներից գործնական պարապմունքներ են անցկացվում ԱԱՊ կենտրոնում, ինչպես նաև պարբերաբար կազմակերպվում են անվճար բժշկական կանխարգելիչ զննումներ:

Դպրոցում իրականացվել և իրականացվելու են դասասենյակների, միջանցքների, սանհանգույցների, բակի վերանորոգումներ և բարեկարգման աշխատանքներ:

Համընդհանուր ներառական կրթության պահանջներին համապատասխան դպրոցում իրականացվում է ներառական կրթություն:

3.6. Դպրոցում կրթական համակարգի առկա վիճակը և հիմնախնդիրները

Դպրոցում կրթական, դաստիարակչական գործունեությունը իրականացվում է ժողովրդավարական հիմունքներով: Պարբերաբար հրավիրվում են աշակերտական, ծնողական, խորհրդի նիստեր, քննարկվում են աշակերտների հետաքրքրասիրությունը մեծացնելու, ուսման որակը բարելավելու , դպրոցի առօրյան հետաքրքիր դարձնելու ծրագրեր և ընթացք են տրվում թե աշխորհրդի առաջարկություններին:

Դպրոցն օրեցօր թևակոխում է զարգացման նոր փուլ, որի հիմքում ընկած են կրթական բարեփոխումները: Հանրակրթական իրավական բարեփոխումն ու զարգացումն անհրաժեշտ են և անխուսափելի, քանզի պետության ու ազգի հզորացման գործում կարևոր է ձևավորել պետական մտածելակերպ և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացի: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և սովորողների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու մատչելիությունը: Կրթության բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման կազմակերպման արդյունավետ մեթոդների ու տեխնոլոգիաների զարգացում:

Դիտարկելով դպրոցի վերջին տարիների գործունեությունը, ուսումնասիրելով ձեռքբերումների արդյունավետության աստիճանը, զուգահեռներ անցկացնելով կրթության լավագույն դպրոցների վարկանիշային արդյունքների հետ, հետազոտելով նրանց փորձը, ինչպես նաև կարևորելով մանկավարժական գիտաժողովներում վեր հանված առաջնահերթ խնդիրների լուծման առաջարկված ուղիների կիրառման անհրաժեշտությունը, նաև դպրոցի մասին ձեռքի տակ ունեցած նորմատիվ և իրավական փաստաթղթերը՝ եկել եմ այն եզրակացության, որ կրթական բարեփոխումները պայմանավորված են հետևյալ հիմնախնդիրների առկայությամբ.

Այսօր կրթության որակի բարձրացման հիմնական խոչընդոտը դպրոցում ուսուցման կազմակերպման խմբային ձևն է՝ 30-35 աշակերտ մեկ դասարանում՝ բոլորին ապահովելով միևնույն մակարդակի գիտելիքներով: Մինչդեռ մեր օրերի խնդիրը միանգամայն հակառակն է՝ ապահովել յուրաքանչյուր սովորողի համար կրթական զարգացման սեփական ճանապարհ ունենալու հնարավորություն, հաշվի նստել յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունների, կրթական կարողությունների, ուսումնական նյութի յուրացման անհատական տեմպի հետ:

- Դպրոցի համար հիմնախնդիր է սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակումն ու կիրառումը: Պահանջվող թեստային համակարգի գործածության կողքին, պետք է կիրառել նաև գիտելիքների ստուգման և գնահատման ամենաորակյալ ձևը՝ անմիջական հաղորդակցության միջոցով ստուգումը. երբ մարդը նստում է մարդու դիմաց, նայում է նրա աչքերին, ուզում է՝ գրավոր հարց է տալիս, ուզում է՝ բանավոր: Կենդանի հաղորդակցությունն, անկասկած, մարդուն ճանաչելու և գնահատելու լավագույն միջոցն է:

- Դպրոցում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները պետք է մշտապես վերազինել: Առաջացել է մի կողմից՝ ժամանակակից տեխնիկական միջոցներ ունեցող, դրանց շատ լավ տիրապետող, մյուս կողմից՝ համակարգչային տեխնիկայի օգտագործման նույնիսկ բավարար կարողություններ և հմտություններ չունեցող սովորողների բևեռացման փաստ:

Կարևոր է դպրոցում գործողության մեջ դնել **«Յուրաքանչյուր աշակերտին համակարգիչ»** ծրագիրը:

Ազգային դպրոցի շարունակական վերակառուցման համար առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել՝

- ազգային պատկանելիության, տվյալ հասարակության անդամ լինելու լիարժեք գիտակցմանը.
- իր անձի, շրջապատող մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը.
- մայրենիի խոր և մնայուն արժեքների ձևավորմանն ուղղված ուսուցմանը.
- իր՝ որպես հասարակության անդամի ու քաղաքացու, պարտականությունների և իրավունքների գիտակցմանը.
- համամարդկային, ազգային, սոցիալական, քաղաքական և հոգևոր մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի դրսևորմանը.
- աշխատանք տանել վերապատրաստման, տարակարգի ձգտելու, կամավոր ատեստավորմանը և մանկավարժական հմտությունները զարգացնող այլ գործընթացներին ուսուցիչների մասնակցությունը ապահովելու համար
- դպրոցի նյութատեխնիկական բազան՝ նորագույն լաբորատոր սարքավորումներով, ուսումնական պարագաներով, դիդակտիկ նյութերով, ժամանակակից մարզագույքով հարստացնելուն.

Պետք է հասնել նրան, որ դպրոցի տարրական դասարանների սովորողների 85 %-ը ցուցաբերի գերազանց և լավ առաջադիմություն, դպրոցում ստեղծվի ուսումնառության բարձր մակարդակ ապահովող կրթադաստիարակչական նոր միջավայր, որը կնպաստի սովորողների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը, բարձրացվի դպրոցի վարկանիշը: Երկրում, մարզում, գյուղում, դպրոցում անցկացվող ավանդական միջոցառումները և՛ բովանդակային, և՛ կազմակերպչական տեսանկյունից դառնան գյուղական, քաղաքային և մարզային տոնակատարություններ՝ բարձրացնելով սովորողների քաղաքացիական պատրաստվածությունը:

Պետք է կարևորվի ԲՏՃՄ առարկաների դասավանդումը նաև անձի ձևավորման տեսանկյունից, այն անձը, ով իրեն ազատ է զգում մաթեմատիկայի տարածքի մեջ, ունի հիմնարար մաթեմատիկական պատկերացումներ, հակված է հետազոտության և պատրաստ է որոնելու ինքնուրույն լուծումներ, նրան հեշտ են տրվում նաև մնացած առարկաները:

Պետք է հիմնական դպրոցում մշակել և կիրառել աշակերտական ինքնավարության, նրանց իրավունքների ու պարտականությունների կիրառման նոր, ավելի արդյունավետ մոտեցումներ, որպեսզի կառավարման գործընթացը հասանելի լինի միջնակարգ դպրոցի բարձր դասարանցուն:

Պետք է կազմակերպել աշակերտների ֆիզիկական ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստող բազմաբնույթ աշխատանքներ: Հատուկ ուշադրության կենտրոնում պահել ֆիզկուլտուրայի և ՆԶՊ առարկայի դասավանդումը, ակտիվացնել արտադասարանական խմբակների /վոլեյբոլ, ֆուտբոլ, բասկետբոլ, շախմատ, կարատե, երգ, պար/ աշխատանքները, շարունակել միջդասարանային մրցումների կազմակերպումը, անցկացնել սպորտլանդիաներ, սպորտային շքերթներ, այցելել տարբեր զորամասեր:

Պետք է ամրապնդել դպրոց-համայնք համագործակցությունը: Ակտիվորնեն մասնակցել համայնքի յուրաքանչյուր նախաձեռնությանը, տոնակատարություններին, համաքաղաքային միջոցառումներին:

3.7. Ուսուցիչներին ներկայացվող պահանջները

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքն ուսուցիչն է, իսկ կրթակարգի ներդրման հաջողության հիմնարար գործոնը՝ ուսուցիչների մասնագիտական կատարելագործման արդյունավետ իրականացումը: Ուսուցիչը պետք է նվիրված լինի իր աշխատանքին, բարձր պահի մանկավարժի մասնագիտության վարկանիշը և մեծ պատասխանատվությամբ վերաբերվի իր մասնագիտական պարտականությունների կատարմանը: Դպրոցի տնօրենությունը, առարկայական մեթոդական միավորումները դպրոցի զարգացման գործընթացում առաջնահերթ խնդիր են համարում ուսուցիչների կողմից դպրոցի բարեփոխումների անհրաժեշտությունը, յուրաքանչյուր ուսուցիչ ինքը պետք է դառնա հետազոտող՝ նույնը սովորեցնելով իր աշակերտին: Այս և մյուս բոլոր դեպքերում խրախուսել, շահագրգռել ուսուցչին: Ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացներին, զբաղվի ինքնակրթությամբ, աշխատի իր որոկավորման բարձրացման ուղղությամբ, մասնակցի կամավոր ատեստավորմանը, վարժ տիրապետի ՏՀՏ-ներին: Ուսուցիչը պետք է պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ և շարունակ ձգտի ինքնակատարելագործման:

Դրա համար պետք է՝

- Աջակցել տարակարգ ստանալու ցանկություն հայտնող ուսուցիչներին,
- մշակել և իրականացնել մանկավարժական և մասնագիտական ձեռնարկների և ամսագրերի նյութերի, հոդվածների քննարկումներ:

Կրթության առաջընթացի և ուսման որակի բարելավման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով պետք է՝

- սովորողների հավատը սեփական ուժերի նկատմամբ ամրապնդել,
- ուսումնական գործընթացը արդյունավետ ծրագրել,
- ինքնուրույն կամ գործընկերների հետ ստեղծել ուսումնական նյութեր,
- ներդնել ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ,
- ստեղծել ուսուցման բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր:

Մեր առջև խնդիր է դրված ձևավորել ամբողջ կյանքի համար կիրառելի գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, արժեքներով օժտված անհատներ: Ուսուցիչը պետք է օգնի աշակերտին գիտելիքներ ստանալ ոչ թե պատրաստի ձևով, այլ շեշտը դնելով բանավոր և գրավոր խոսքի փոխշաղկապվածության վրա: Մանկավարժական կադրերի համակարգը բարելավելու, նրանց մասնագիտական վարպետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է փուլ առ փուլ իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Ապահովել ուսուցիչների կանոնավոր մասնակցությունը վերապատրաստումներին և ատեստավորմանը:

- Շարունակել ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները՝ շեշտը դնելով դասավանդման նոր մեթոդիկայի և ձևերի վրա:
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների կազմակերպման համար:

Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին

3.8. Սովորողների կարողությունների և հմտությունների զարգացումը

Չափորոշչով սահմանվող հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչներն են՝

- 1) գիտելիք.
- 2) հմտություն.
- 3) դիրքորոշում.
- 4) արժեքային բաղադրիչ:

Որոնց հիման վրա ձևավորվում են միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը: Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

Դպրոցում կրթությունը կազմակերպելիս պետք է առաջնորդվել հետևյալ հիմնադրույթներով.

- *Յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնելու մանկավարժորեն և հոգեբանորեն ճիշտ ընտրված և ներկայացված ցանկացած ուսումնական նյութ:*
- *Երեխաները միմյանցից տարբերվում են իրենց մտածելակերպով, հոգեբանական առանձնահատկություններով, լեզվամտածողությամբ և ընկալման յուրահատկություններով:*

Դպրոցին կտրվի բազմամշակութային հնարավորություններ, որի շնորհիվ աշակերտների թիվը կավելանա, այսինքն՝ գյուղի աշակերտը կմնա գյուղի դպրոցում:

Այն կվերածվի կրթամշակութային, մարզաառողջարարական և սպասարկման համալիրի, որը կդառնա առավել հոգեհարազատ և բազմաբովանդակ համայնքային կենտրոն: Աշակերտները հնարավորություն կունենան զբաղվելու սիրած գործով՝ իրականացնելով իրենց

ստեղծագործական ունակությունները և հետաքրքրությունները: Դպրոցը աշխատում է ամբողջ օրվա համակարգով, որը կապահովի աշակերտների առողջ և անվտանգ կյանքը: Այսպիսով՝ ամեն օր դպրոցին կտրվի նոր դրական և տեսանելի փոփոխություններ՝ պահպանելով հին ավանդույթները:

2023-2028 տարիների համար դպրոցը կունենա զարգացման 3 ճյուղ՝

1. Կրթական
    - ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված ծրագիր
    - Ներդպրոցական՝ մանկխորհի կողմից սահմանված ծրագիր
    - Մշակութային և սպորտային
2. Մշակութային
    - Երգչախումբ և գրական խմբակ
    - Կերպարվեստ, ձեռքի աշխատանք
    - Ինֆորմատիկա, բնագիտություն
3. Մարզաառողջարարական
    - Բասկետբոլի, Ֆուտբոլի, վոլեյբոլի և կարատեի խմբակներ
    - Շախմատի խմբակ

3.9. Իրականացման գործողությունները

❖ Մանկավարժական, ծնողական, աշակերտական և համայնքապետարանի օգնությամբ քարտեզագրել դպրոց չհաճախող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին:

❖ Դպրոցի բյուջեում նախատեսել ՏՀՏ-ների և գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ գումար:

❖ ԴիմելԿՏԱԿ, ԿԳՄՄՆ, մասնակցել տարբեր ծրագրերի:

❖ Դիմել Խորհրդին՝ աջակցելու վերը նշված դպրոցի կարիքները դպրոցի բյուջեում ընդգրկելու համար:

❖ Ստեղծել երկարօրյա խմբեր:

❖ Ա.-ներկայացնել մանկխորհին երկարօրյա խմբերի կարևորությունը.

❖ Բ-տրամադրել սենյակներ երկարօրյա խմբերի համար.

❖ Գ- կազմել ուսումնական պլան և դասացուցակ.

❖ Դ-ծնողի հետ կնքել վճարման պայմանագիր:

Խնդիր 1- Ունենալ որակյալ կադրեր երկարօրյա խմբերում աշխատելու համար:

Ա-Ուսուցիչներին պարբերաբար ուղարկել վերապատրաստումների:

Բ-Կապ հաստատել մասնավոր դպրոցների ուսուցիչների հետ:

Գ-Լավ արդյունքների համար խրախուսել ուցուցիչներին:

Դ-Հանձնարարել մ/մ նախագահին հատուկ ուշադրություն դարձնել երկարօրյա խմբերի ուսումնական պլաններին:

Ե-Ապահովել փոխդասալսումները:

Խնդիր 2 -Ուսումնասիրել մյուս երկրների փորձը:

Ա-Սոցցանցերում ուսումնասիրել այլ երկրների փորձը և հետևել դրանց ներդնելուն:

Բ-Մասնակցել ՀՀ-ում և օտարերկրյա հեռավար դասընթացներին և վերապատրաստումներին:

Ա-Հրավիրել ԿԶՆԱԿ-ի մասնագետներին:

Բ-Հրավիրել ԵՊՄՀ-ի դասախոսներին:

Գ-Կազմակերպել հանդիպումներ, կլոր սեղաններ, մասնավոր դպրոցների ուսուցիչների հետ:

Դ-Աշխատանք տանել ծնողների և բարեգործական կազմակերպությունների հետ:

<u>Իրականացման ժամանակահատվածը.</u>

- 2023-2024 ուստարի
- 2024-2025 ուստարի
- 2025-2026 ուստարի
- 2026-2027 ուստարի
- 2027-2028 ուստարի

<u>Պատասխանատուներ.</u>

Տնօրեն, փոխտնօրեններ, մ/մ նախագահներ, ուսուցիչներ, կառավարման խորհրդի, ծնողխորհրդի և աշակերտական խորհրդի անդամներ:

Հինգ տարիների նպատակասլաց գործունեության արդյունքում ակնկալում եմ.

- Ապահովել կրթության ոլորտում նվաճումների աճ:
- ունենալ բարձր վարկանիշ ունեցող ավագ դպրոցների շրջանավարտների հետ մրցունակ աշակերտներ, բուհերում և այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում պահանջարկ ունեցող շրջանավարտներ,
- նպաստել սովորողների ազգային յուրահատուկ ինքնության գիտակցման և արժևորման դաստիարակմանը,
- տեսնել դպրոցի երեխաներին միջազգային ասպարեզում:

3.10. Ուժեղ և թույլ տեղերը.

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ եմ համարել վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցն ունի լավ շենքային պայմաններ, տարածքն առանձնացված է ցանկապատով, • Կաթսայատան առանձին շինություն և լոկալ ջեռուցում, • Ինտերակտիվ և համակարգչային դասասենյակներ ունենալը /SMART գրատախտակների առկայություն/, • Լաբորատոր գույքանյութական անհրաժեշտ բազա/ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն/ ունենալը, • Անհրաժեշտ գույքով կահավորված հանդիսությունների դահլիճի և վերանորոգված մարզադահլիճի առկայություն, • Համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթությամբ մանկավարժական համակազմ, • Բարոյահոգեբանական համագործակցային առողջ մթնոլորտ ունենալը, • Անգլերեն լեզուն դասավանդվում է սկսած 5-րդ դասարանից, • Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ, • Ոսկե մեդալ ստացող ունենալը, • Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը, • Փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվումէլեկտրոնայինի՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 08.09.2020թ. N 28-Ն հրամանի:	• Դպրոցը չունի ապաստարան, • Տարրական դպրոցի երկրորդ հարկի հատակը սալիկապատված չէ և գտնվում է ոչ բարվոք վիճակում, • Թեքահարթակների պակասը, • Դպրոցում տեսախցիկների հսկողության բացակայություն, • Արտաքին և ներքին հակահրդեհային ջրամատակարարում չունենալը, • Բնագիտական առարկաների գծով առանձին լաբորատորիաներ չունենալը, • Գրադարանային ֆոնդը թվայնացված չէ, • Համակարգչային արդիական լիարժեք սարքավորումներ չունենալը, • Ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը, • Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների պակասը, • Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների հետաքրքրության պակասը,: • Կամավոր ատեստավորում անցած ուսուցչի բացակայություն, • Միջազգային վերապատրաստումների պակաս, • Աշակերտների կողմից ընթերցանության հանդեպ հետաքրքրության պակաս, • Համագործակցություն արտերկրի դպրոցների հետ, • Դպրոցի՝ առարկայական երիտասարդ մասնագետներով ապահովվածությունը, • Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ

• Կառավարման և խորհրդակցական մարմինները, • Աշակերտական համակազմը, • Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների հետ, • Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների: • Բոլոր ուսուցիչների՝ պարտադիր հերթական ատեստավորմանը մասնակցելը և ատեստավորված լինելը • Ուսուցիչների կողմից կազմված և ԿԳՄՍ նախարարի կողմից երաշխավորված խմբակների ծրագրերի առկայություն • Ուսուցիչները պարբերաբար լրացուցիչ պարապմունքներ են անցկացնում աշակերտներին օլիմպիադաներին նախապատրաստելու համար • ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման լիարժեք մակարդակը: • Դպրոցը պետ. բյուջեից ստանում է կայուն ֆինանսական միջոցներ, • Աշխատավարձի, հարկերի ժամանակին և կանոնավոր վճարում	• Դպրոցն ունի բարեգործությունների նվիրատվությունների, և լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք:

Սույն վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցի թույլ կողմերով է բացատրվում հիմնախնդիրներից առաջնայինները:

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

7. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

8. ՌԻՍԿԵՐԸ

9. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Զարգացման ծրագիրը կազմելիս նպատակահարմար եմ գտնել բովանդակության մի քանի թեմա (վերնագիր) աղյուսակի տեսքով ներկայացնել, որպեսզի հստակ նշվեն բոլոր նպատակներին հասնելու ուղիներին առնչվող խնդիրները, դրանց իրականացումն ապահովող քայլերի ժամանակացույցը, իրականացման պատասխանատուները, արդյունքների գնահատման չափանիշները, ռիսկերը և անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները:

Դպրոցի գործունեության գլխավոր նպատակը ձեռքբերումների պահպանումն է, մասնավորապես, բարոյահոգեբանական առողջ, համագործակցային մթնոլորտ, աշխատանքային կարգապահություն, ներքին վերահսկողության մեթոդների կատարելագործում, շարունակական կրթության ապահովում, ուսուցման բարձր առաջադիմություն, ժամանակի պահանջներին համապատասխան աշխատանք, շենք-շինություն, գույքանյութական արժեքներ, ֆինանսատնտեսական գործունեության ճիշտ կառավարում, հաստատության ծրագրավորված զարգացման ապահովում:

հ/հ	Նպատակ	Խնդիր	Իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը	Պատասխանատուները (Կատարողները)	արդյունքների գնահատման չափանիշները	Ռիսկերը	Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները
1	Իրականացնել Հանրակրթության պետական չափորոշչի պահանջները	հանրակրթության համակարգում ապահովել պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի ներդրման հետ կապված հարաբերությունները	ուսումնական գործունեության ընթացքում	մանկավարժական կազմ	տիրապետել հանրակրթության պետական չափորոշչի բոլոր դրույթներին	հանրակրթության պետական չափորոշչի պահանջների թերակատարում	նորմատիվ փաստաթղթեր ՏՀՏ գործիքներ
2	Նպաստել ուսուցիչների ստեղծագործական մտքի զարգացմանը, տարակարգ ձեռք բերելուն	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը մասնագիտական զարգացման ծրագրերին: ՏՀՏ գիտելիքների լիարժեք ձեռքբերումը, իրականացնել տարբեր նպատակներով իրականացվող դասալսումներ	2023-2028 թթ	Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ, առարկայական մեթոդական միավորումներ,	Աշակերտների ուսումնառության որակի բարձրացում	Թղթարարության ծավալուն լինելու պատճառով տարակարգ ձեռք բերելուց խուսափելը,ինչպես նաև կամավոր ատեստավորման չմասնակցելը,	Լաբորատորիաներ, լաբորատոր սարքավորումներ, նյութեր, գրադարան անհրաժեշտ գրականությամբ, համակարգչային և ինտերակտիվ դասասենյակներ
3	համընդհանուր ներառական	յուրաքանչյուր երեխայի համար, այդ	2023-2028 թթ	տնօրեն փոխտնօրեններ	Ներառական կրթության	կրթության առանձնահատու	հարմարեցված դասասենյակներ

	կրթության համակարգի ներդրման գործընթաց /աջակցություններ ի սենյակի կահավորում, թեքահարթակների ստեղծում և այլն/	թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության իրականացում		հոգեբան մանկաարժահոգեբանական աջակցության թիմ ուսուցչի օգնականներ ուսուցիչներ	ապահովում	կ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպելու ընթացքում առաջացած խնդիրները	թեքահարթակներ, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի առկայություն անհրաժեշտ գրականություն ԱՈԻՊ
4	Ուսուցման և ուսումնառության որակի բարելավումը	Նախագծել և իրագործել ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր՝ պարբերաբար իրականացնելով մշտադիտարկում	2023-2028թթ	Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ (ԴԱԿ), առարկայական մեթոդական միավորումներ, գրադարանավար, լաբորանտ	Ուսուցման և ուսումնառության որակի բարելավում	Դասավանդող ուսուցիչների տարբեր պատճառներով, ըստ ժամանակացույցի, մասնագիտական զարգացման ծրագրերին չմասնակցելը	Լաբորատորիաներ, լաբորատոր սարքավորումներ, նյութեր, գրադարան անհրաժեշտ գրականությամբ, համակարգչային և ինտերակտիվ դասասենյակներ
5	Առողջ ապրելակերպի և	Առողջ ապրելակերպ, ֆիզիկական	2023-2028թթ	Տնօրենություն, մ/մ նախագահներ, բուժքույր,	Խրախուսել առողջ ապրելակերպը,	ֆորս-մաժորային իրավիճակներ	Մարզագույք, մարզադահլիճ,

	սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումների և սպորտլանդիաների կազմակերպում	պատրաստվածություն		ուսուցիչներ	խթանել սպորտի զարգացմանը, հիմք դնել տարբեր սպորտաձևերի հանդեպ հետաքրքրությանը	(անհաղթահարելի դժվարություններ)	մարզահրապարակ
6	Նախակրթարանի աշխատանքների կազմակերպում	Նախագծել և իրագործել դաստիարակների մասնագիտական զարգացման ծրագիր՝ պարբերաբար իրականացնելով մշտադիտարկում	2023-2028թթ	Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ (ԴԱԿ),	Նախակրթարանի միջոցով հիմք դնել սովորողի ուսումնառությանը	Դպրոցի և նախակրթարանի աշխատանքների լիարժեքության ապահովում	Հարմարեցված սենյակներ, անհրաժեշտ գույք համակարգիչ
7	Հանրակրթական տարբեր աստիճաններում առկա քննություններին աշակերտների ցուցաբերած առաջադիմության բարելավում	Ներքին և արտաքին նահատման միջոցով պարբերաբար անցկացնել գիտելիքների ստուգում (թելադրություն, թեստային աշխատանք և այլն)	2023-2028թթ	Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ, առարկայական մեթոդական միավորումներ, դասավանդող ուսուցիչներ	Ամրապնդել սովորողների ակադեմիական նվազագույն գիտելիքները՝ ապահովելով 35-45% որակական աճ՝ ունեցած գիտելիքների համեմատ	Սովորողի կողմից միտումնավոր գիտելիքների ստուգումից խուսափելը	Լաբորատորիաներ, լաբորատոր սարքավորումներ, նյութեր, գրադարան անհրաժեշտ գրականությամբ, համակարգչային և ինտերակտիվ դասասենյակներ
8	Բնագիտական առարկաների գծով առանձին լաբորատորիաների ստեղծում, փորձարարական	Տրամադրել առանձին սենյակներ առարկայական լաբորատորիաների ստեղծման համար	2023-2028թթ	Տնօրենություն, ԴԱԿ, բնագիտական առարկաների մեթոդական միավորում, դասավանդող ուսուցիչներ, լաբորանտ,	Պրակտիկորեն և ինքնակրթության միջոցներով ապահովվելը, սովորողների տեսական	Լաբորատոր պահեստներում գտնվող ժամկետանց և թունավոր նյութերի դուրս	Դպրոցն ունի հարուստ նյութատեխնիկական բազա՝ կահավորելու տեսլականում ստեղծվող լաբորատորիաները:

	նյութերի ձեռք բերում			տնտեսվար, ծնողական խորհուրդ	գիտելիքների ամրապնդում գործնական հմտություններով՝ համապատասխան նյութերով և սարքավորումներով կատարելով լաբորատոր փորձեր, բնագիտական ոլորտի զարգացում, ուսման որակի խթանում, բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության բարձրացում, սովորողների մասնագիտական կողմնորոշում ապահովում	գրման և վերացման հետ կապված խնդիրների առաջացում	Համագործակցության արդյունքում ձեռք են բերվել փորձարարական նյութեր և պաագաներ
9	Հումանիտար և ԲՏՃՄ առարկաների գծով արտադասարանական և օլիմպիական խմբակների ստեղծում՝ դպրոցի բյուջեի միջոցների	Դպրոցի բյուջեից նախատեսել գումար՝ հումանիտար և ԲՏՃՄ առարկաների գծով արտադասարանական և օլիմպիական խմբակների ստեղծման և գործունեության	2023թ-ից	Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ, առարկայական մեթոդական միավորումներ, դասավանդող ուսուցիչներ, ծնողական	ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերին բարձր ցուցանիշներ գրանցելը, ուսուցման և	Ֆինանսական սուղ միջոցներ, սովորողների հետաքրքրության պակաս	Լաբորատորիաներ, լաբորատոր սարքավորումներ, նյութեր, օլիմպիադայի առաջադրանքներին համապատասխան անհրաժեշտ գրականություն, համակարգչային և

	հաշվին	համար		խորհուրդ	ուսումնառության որակի խթանում		ինտերակտիվ դասասենյակներ, ինտերնետ կապի ապահովում նկատի ունենալով ԲՏՃՄ օլիմպիադաների առցանց կազմակերպումը
10	Գրադարանային ֆոնդի թվայնացում,	Գրադարանային ֆոնդի տացքի (էլեկտրոնային) ցուցանիշների բարձրացում և ֆոնդի լիարժեք ու նպատակային առցանց օգտագործում	2023-2028թթ	Տնօրեն, գրադարանավար, ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր, հրավիրված մասնագիտական խումբ, տնտեսվար	Ուսուցման և ուսումնառության գործընթացի արդիականացում, ուսման որակի բարելավում, գրադարանային ֆոնդի նպատակային օգտագործում ոչ միայն դպրոցի սովորողների այլ նաև ընթերցասեր հասարակության համար	Գործընթացի աշխատատար և ժամանակատար լինելը, մասնագիտական վերապատրաստող խմբին վճարելը	Նոր սերնդի համակարգիչներ, գերարագ ինտերնետ կապ
11	Ուսումնական ռեսուրսների համալրում՝ նոր սերնդի համակարգչային սարքավորումներով, համապատասխան ուսումնական	Հաստատության կառավարման մարմինների աջակցությունը, ինչպես նաև հատկացնել միջոցներ դպրոցի բյուջեից	2023-2028թթ	Տնօրեն, ինֆորմատիկայի ուսուցիչ, տնտեսվար, ծնողական խորհուրդ	Նոր սերնդի համակարգիչների առկայությունը կփոխի ուսումնական գործընթացի, դպրոցավարության, ուսուցիչների մասնագիտական	Ֆինանսական միջոցների սղություն, ֆորս-մաժորային իրավիճակ	Նոր սերնդի համակարգիչներ, գերարագ ինտերնետ կապ

	ծրագրերով				զարգացման արդյունավետությունը, կխթանի սովորողների ստեղծագործ մտածողությունը, կօգնի ակտիվորեն ընդգրկվելու ուսումնական գործընթացում, խորացնելու ուսուցանվող նյութի իմացությունը, հասնելու դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալման, բարձրացնելու առաջադիմությունը, ինչպես նաև կիրառելու ժամանակակից ուսուցման գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են նաև ուսուցչի աշխատանքի որակի բարձրացմանը, մասնագիտական		

					գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը		
12	1-ին մասնաշենքի 2-րդ հարկի միջանցքի սալիկապատումը	1-ին մասնաշենքի 2-րդ հարկի միջանցքի մանրահատակի շարքից դուրս եկած լինելը, որը ազդում է դպրոցի սանիտարահիգիենիկ վիճակի վրա:	2023-2028թթ	Տնօրենություն, համակարգող, տնտեսվար	Սանիտարահիգիենիկ կանոնների պահանջներին համապատասխան սալիկապատ հատակ	Ֆինանսական սուղ միջոցները, հնարավոր ֆորս-մաժորային իրավիճակը	Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները ակնկալել աշխատանքը կատարողների կողմից
13	Դասասենյակների մասնակի վերանորոգում և կահավորում	մանրահատակի շարքից դուրս եկած լինելը, որը ազդում է սանիտարահիգիենիկ վիճակի վրա, որոշ դասասենյակներում առաջացել է պատերը ներկելու խնդիր	2023-2028թթ	Տնօրենություն, համակարգող, ծնողական խորհուրդ, տնտեսվար	Կրթական միջավայրի բարելավում և հարմարավետ պայմանների ստեղծում	Ֆինանսական սուղ միջոցները, հնարավոր ֆորս-մաժորային իրավիճակը	Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները ակնկալել աշխատանքը կատարողների կողմից
14	նոր մասնաշենքի կառուցում,որը կունենա նոր դասասենյակներ, լաբորատորիաներ՝	2026 թվականից դասարանների կազմավորման համար նախատեսվում է	2023 թվականից	տնօրեն կառավարման խորհուրդ համայնքապետարան	դասասենյակների քանակն ավելացնելու ծրագիրը դառնում է գերակա խնդիր, նոր	Պետության կողմից չհատկացվող ֆինանսական միջոցներ, ֆորս-	պետության աջակցություն, բարեգործական կազմակերպություններ,

	համալրված համապատասխան գույքով, ապաստարան։ Դասասենյակների քանակն ապահովելուց հետո ուսուցիչների համար նախատեսել հանգստի սենյակ՝ խոհանոցային հարմարեցումներով։ Աշխատանքի իրականացման համար դիմել պետությանը, ինչպես նաև ակնկալել համայնքի օգնությունը	պարտադիր դարձնել տարրական և միջին մակարդակում առավելագույնը 25 և ավագ մակարդակում՝ առավելագույնը 20 սովորող ունենալը։ Դպրոցում դասարանների քանակի ավելացման հետևանքով առաջանում է դասարանների տեղավորման խնդիր Աշխարհագրական դիրքը թելադրում է ունենալ նաև ապաստարան։			մասնաշենքի առկայությունը դպրոցը կհամալրի լաբորատոր կաբինետներով, յուրաքանչյուր դասարանի համար հատկացված դասասենյակով և կլուծի ապաստարանի հարցը։	մաժորային իրավիճակներ	համայնքապետարան, մասնագիտական խումբ
15	ֆինանսական միջոցների խնայում արեգակնային համակարգի տեղադրում	Արևային էներգիան՝ որպես այլընտրանքային էլեկտրաէներգիայի ստացման աղբյուր. Տարեկան տասը միլիոն դրամ հատկացվում է դպրոցի լոկալ ջեռուցման համար։ Որպեսզի դպրոցի	2023-2024թթ	տնօրեն հաշվապահ տնտեսվար « Օհմ էներջի » ընկերություն	Բնական ռեսուրսներից ստացված էներգիայի օգտագործումն այսօր արդիական թեմա է	Համակարգի անխափան գործընթացի ապահովում	մասնագիտական խումբ անհրաժեշտ սարքավորումներ

		ֆինանսական միջոցները խնայվեն, նպատակահարմար է տեղադրել արևային էներգիայի համակարգեր					
16	տեսախցիկների ձեռքբերում	Անվտանգության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է դպրոցի արտաքին հատվածում, մուտքի մոտ,միջանցքներում, լաբորատորիաներում , ինտերակտիվ դասասենյակներում գրադարանում տեղադրել տեսախցիկներ	2023-2028թթ	տնօրեն հաշվապահ տնտեսվար	Տեսախցիկի առկայությունը կարող է մեծացնել սովորողների և դասավանդողների պատասխանատվությունը	ֆինանսական սուղ միջոցներ, տեսագույքի վնասում	համակարգիչներ գերարագ ինտերնետ կապ մասնագիտական խումբ
17	Դպրոցի հարակից տարածքում մրգատու այգու հիմնում	Աշակերտների մեջ աշխատանքային դաստիարակություն ձևավորելու նպատակով դպրոցի հարակից տարածքում աշակերտների օգնությամբ մշակել հողատարածությունը՝ հիմնելով մրգատու այգի , տնկել նաև մորու , հաղարջի տնկիներ	2023-2028	տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, տնտեսվար, բնագիտական առարկաների մեթոդական միավորում, ծնողխորհուրդ, աշխորհուրդ հասարակական կազմակերպություններ	դպրոցը կունենա բարեկարգ շրջակայք, ստացված բերքը կօգտագործվի ձեռնարկատիրական նպատակով	այգեգործական աշխատանքների թերակատարում ջրի պակաս	տեխնիկական միջոցներ

Սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման և այդ գործընթացների կազմակերպման վերահսկողության համար տնօրենության կողմից պարբերաբար կիրականացվեն մշտադիտարկումներ և մոնիթորինգներ:

<u>Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝</u>

- Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար, ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում:
- Համաձարակային կանոնների պահպանում:
- Դպրոց-ծնող կապի արդյունավետության բարձրացում:
- Մասնագիտական թիմի և դասավանդող ուսուցիչների նպատակային համագործակցություն:
- Ճանաչողական այցեր դպրոցներ և միջին մասնագիտական հաստատություններ:
- Համագործակցություն համայնքի դպրոցների և կրթամշակութային հաստատությունների հետ:
- Մոտիվացնել, խրախուսել ուսուցիչներին

10. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի կառավարման խորհուրդը գործունեության ընթացքում՝ որպես կանոն, վերահսկում է զարգացման ծրագիրը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, անդրադառնում է զարգացման ծրագրի նպատակներին, քննարկում կատարված գործողությունները, իրականացնում մշտադիտարկումներ և աջակցություն։Վերահսկողության արդյունքում ձևավորվում են գնահատման մեխանիզմներ, որոնք համապատասխանում են հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատման չափանիշներին :

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակների իրականացումը վերահսկվում է ինչպես կառավարման խորհրդի, այնպես էլ մյուս խորհրդակցական մարմինների կողմից, ստուգվում է ծրագրի կատարողականը, կազմվում է դպրոցի յուրաքանչյուր ոլորտի ընդհանուր պատկերը արտացոլող վիճակագրական տվյալներով աղյուսակ, գնահատվում կատարված աշխատանքը, համեմատական կարգով վերլուծվում են տեղի ունեցած փոփոխությունները։Այս ամբողջն իրականացվում է զարգացման ծրագրի կատարման ընթացքը գնահատելու համար։

Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցում իրականացվող ներքին գնահատմանը մասնակցում են խորհրդի անդամները, վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողները, ծնողները, ՏԻՄ-ի ներկայացուցիչները,աշխատանքները համակարգում է ներքին գնահատման հանձնաժողովը։

գնահատման մեթոդաբանության հիմքում կկիրառեմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 05.12.2022 թվականի N 76-Ն հրամանով սահմանված կարգի գնահատման մեթոդաբանությունը և գնահատման սանդղակին համապատասխան գործիքակազմը

Գնահատման հիմնական ուղղություններ. <u>արդյունավետ պլանավորել և օգտագործել</u> դպրոցի բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները, <u>իրականացնել</u> առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ, <u>ապահովել</u> անվտանգությունը, պահպանել սանիտարահիգիենիկ նորմերը, <u>հետևել</u> դպրոցի շենքի և տարածքի անվտանգ շահագործմանը, <u>կատարել</u> սովորողների հոգևոր, ֆիզիկական, սոցիալական առողջության ուղղությամբ իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները, խթանել խորհրդի և խորհրդակցական մարմինների ակտիվ մասնակցությունը՝ դպրոցի կարևորագույն որոշումների իրականացման գործում, <u>ապահովել</u> ուսուցչական անձնակազմի դասավանդման համապատասխանությունը ներկայիս պահանջներին, մանկավարժական աշխատողներին՝ անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը, խորհրդի և խորհրդակցական մարմինների մասնակցությունը ուսումնական պլանի կազմման աշխատանքներին, ուսումնական պլանի կազմման համապատասխանությունը՝ հանրակրթության պետական չափորոշչին, շահառուների կարիքներին, ներդպրոցական վերահսկողության համակարգի արդյունավետությունը, աշխատակազմի մասնագիտական զարգացման և կառավարման արդյունավետությունը, համայնքի հետ հարաբերությունների արդյունավետությունը, կարևորել դպրոցի ու համայնքի համագործակցությունը, իրականացնել տնօրենության և սովորողների համագործակցության ապահովումը, նրանց մասնակցութունը դպրոցի գործունեությանը: Ապահովել աշակերտական խորհրդի գործունեությունը, որակյալ ներառական կրթական միջավայրը և հավասարությունը, ներառական կրթության ոլորտում

աշխատակազմի կարողությունները։ Հետևել ծնողական խորհրդի գործունեությանը, տնօրենության, մանկավարժական,ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությանը, կազմակերպել արտադասարանական ու արտադպրոցական գործունեություն։
Վերահսկվում է համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին և դրա շրջանակում կազմակերպված միջոցառումներին։

Գնահատման գործընթացի կարևորագույն բաղադրիչներից են սկզբնական իրավիճակի գնահատումը, ընթացիկ գործունեության գնահատումը և ստացված արդյունքների գնահատումը։ Նշված բաղադրիչները կիրառվում են սահմանված նպատակների խնդիրների իրականացումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով։ Ստուգվում է դպրոցի, համայնքի և խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունավետությունը, դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրումը, ՏՀՏ-ի կիրառության արդյունավետությունը, աշխատանքային պլաններում նշված ծրագրերի կատարողականը.կատարվում է իրավիճակի վերլուծություն, ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման քննություն, ստուգվում է ուսպլանի և դասաժամերի համապատասխանությունը, մանկավարժական աշխատողների և դասավանդող ուսուցիչների մասնագիտական զարգացման գործընթացը։ Վերահսկվում է գործընկերային հարաբերությունը, դպրոց, սովորող, ընտանիք կապի արդյունավետությունը։ Գնահատվում են սովորողի կարիքները, ստուգվում են դպրոցում եղած հարմարեցումները։

11. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

- հիմնական ուշադրությունը սևեռել կրթական գործունեությանը.
- չանտեսել շփման, սոցիալականացման հիմնական հարցերը.
- առաջնային պլանի վրա դնել աշակերտ-ուսուցիչ, ծնող-ուսուցիչ հարաբերությունները, որոնք պետք է հիմնված լինեն երկուստեք փոխադարձ հարգանքի, վստահության, իրար օգնելու, համագործակցության և համբերատարության վրա, քանի որ ծնողը-սովորողը-ուսուցիչը փոխլրացնող են միմյանց.
- գիտակցել, որ ուսումնական գործընթացում ուսուցչի դերն ու ազդեցությունը մեծ է.
- խրախուսել աշակերտների գործողությունները և ստեղծագործական մտածելակերպը.
- հավատալ նրան, որ դպրոցում են դրվում ապագա քաղաքացու կյանքի գլխավոր ուղենիշները՝ արժեքային համակարգի և աշխարհայացքի ձևավորման հիմքերը.
- սովորեցնել երեխաներին, որ միասին հնարավոր է անել ամեն ինչ, անգամ որոշում կայացնել.
- համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելով թափանցիկ միջավայր և բաց հաշվետվողականություն:

Դպրոցի ակադեմիական փիլիսոփայությունը պետք է հիմնվի այն համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր սովորող եզակի է, իր ուրույն տաղանդով և ուսուցման ոճով, և որպես այդպիսին, պահանջում է բազմատեսակ մանկավարժական ռազմավարություններ՝ սովորողի ուսուցման որակը առավելագույնի հասցնելու համար: Մեր դասավանդման մոտեցումները պետք է ձևավորեն բազմակողմանի հնարավորություններ.

Դասարանային ուսուցմանը զուգահեռ մեծ ուշադրություն պետք է դարձնել արտադասարանական ուսուցմանը, մշակելով բազմաթիվ հնարավորություններ սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարման, ստեղծագործական կարողությունների զարգացման, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործման համար:

12. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրենապաշտական դաստիարակություն –
ահա՛ մեր փրկության խարիսխը:
Գ. Նժդեհ

Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը մշտապես եղել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ պատկերացումները ճիշտ ձևավորելու, սեր արմատավորելու համար:

2020թ. Սեպտեմբերյան 44-օրյա պատերազմը իր հետքը թողեց մեր դպրոցի վրա ևս, զոհվեցին դպրոցի 2 շրջանավարտ, որոնց անունով ստեղծվեցին անկյուններ և ձևավորվեցին ռազմահայրենասիրական դասասենյակներ:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում ուղենշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- ✓ դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- ✓ պարբերաբար համակարգել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,
- ✓ դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- ✓ ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների մանկավարժական առաջավոր փորձը,
- ✓ հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, էլեկտրոնային նյութեր և այլն,
- ✓ դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,
- ✓ հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝ «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները,
- ✓ հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները,
- ✓ հարստացնել և համալրել հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական տեղեկատվական բանկը:

13. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2018-2023 թվականներին՝ իմ պաշտոնավարության տարիներին, Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցում կատարվել են աշխատանքներ, որոնք մեծապես նպաստել են դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների զարգացմանը: Իրագործվել են իմ կողմից ներկայացված 2018-2023 թթ զարգացման ծրագրով նախատեսված դրույթների մեծ մասը:

2019թ.-ից հիմք ընդունելով «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եվ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլան»ի 36-րդ կետի երկրորդ ենթակետի պահանջը՝ (հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1.5 կամ 2 ժամ) և 10-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում) դպրոցում դասավանդվում է երրորդ օտար լեզու՝անգլերեն:

2019թ. ձեռք է բերվել աշխատասենյակի կահույք:

2020 թվականը իր հետ որոշակի դժվարություններ բերեց. COVID -19 համավարակը, 44 – օրյա պատերազմը,ինչը, բնականաբար, խախտեց դպրոցի բնականոն ընթացքը: Սակայն դպրոցի ողջ անձնակազմը ջանք չխնայեց ուսումնական գործընթացը անխափան շարունակելու համար:

2020-2021թթ. սալիկապատվեց տարրական դպրոցի մասնաշենքի առաջին հարկի միջանցքը, վերանորոգվեցին երկու հարկերի սանհանգույցները:

2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀՁ): Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին: Դեյվիդ Ռոզը և Անն Մեյերը (2005) ՈՒՀՁ-ն նկարագրել են որպես տեղեկատվությունը աշակերտներին ներկայացնելու, նրանց սովորածը ստուգելու և դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների ամբողջություն: ՈՒՀՁ-ի հիմքում այն սկզբունքն է, որ նյութի բովանդակությունը ակադեմիական փորձառության ամենակարևոր մասն է, սակայն ուսուցիչները սովորողներին դասապրոցեսում ներգրավելու համար բազմազան միջոցներ կիրառելու վարպետություն պետք է ցուցաբերեն: Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա:

2020 թվականից Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցը անցել է համընդհանուր ներառական կրթության գործընթացին:

Դպրոցի Տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը և մի խումբ ուսուցիչներ վերապատրաստվել են «Հույսի կամուրջ» ՀԿ ի կողմից և 2020-2021 ուսումնական տարվանից դպրոցում յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ, ապահովվել հարմարեցված միջավայր, ինչը նպաստել է սովորողների՝ կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն:

Դպրոցում ներառական կրթության իրականացման աշխատանքները ընթանում են դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի պատասխանատվությամբ, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, մանկավարժահոգեբանական թիմի անդամների, ծնողների ակտիվ մասնակցությամբ:

2022-23 ուստարվանից Ծովագյուղի միջնակարգ դպրոցում սովորում և հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության ծառայություններ են ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 7 աշակերտ:

1. Գասպարյան Գոռ, երրորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված ձայնի և խոսքի,ինտելեկտուալ ֆունկցիաների թեթև խանգարումներով:
2. Թովմասյան Ալեն, հինգերորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված ինտելեկտուալ ֆունկցիաների միջին, ձայնի և խոսքի, շարժողական ֆունկցիաների թեթև խանգարումներով:
3. Մարգարյան Մալենա, ութերորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված տեսողական ֆունկցիաների միջին խանգարմամբ (բնածին գլաուկոմա):
4. Անդրիկյան Սարգիս, իններորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված ձայնի և խոսքի, ինտելեկտուալ ֆունկցիաների թեթև խանգարումներով:
5. Մանուկյան Արթուր, տասներորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված ձայնի և խոսքի, ինտելեկտուալ ֆունկցիաների միջին և շարժողական ֆունկցիաների թեթև խանգարումներով:
6. Մկրտչյան Վահե, տասներորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված ինտելեկտուալ, ձայնի և խոսքի, ֆունկցիաների ծանր և շարժողական ֆունկցիաների միջին խանգարումներով:
7. Մկրտչյան Դավիթ Սասունի երկրորդ դասարան, ԿԱՊԿՈՒ աշակերտ է՝ պայմանավորված ինտելեկտուալ ֆունկցիաների ծանր, շարժողական ֆունկցիաների ծանր, ձայնի և խոսքի միջին խանգարումներով:

Դպրոցի մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպես, ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատետրում գրվող անծանոթ բառերի քանակը, որը աշակերտը պետք է սովորի

նախքան նոր դաս անցնելը: Տարբերակված ուսուցումը կիրառվել է աշխարհի տարբեր դպրոցների ներառական դասարաններում և հիմնված է Վիգոտսկու «Զարգացման մոտակա գոտու» (1978) տեսության վրա, ըստ որի սովորողները լավ են սովորում, երբ տրված հանձնարարությունները մատչելի են, ոչ թե շատ դժվար կամ պարզունակ: Քոֆմանը և Հալահանը (2011) այս մոտեցումը որակում են որպես տեղեկատվությանը «դժվարությամբ տիրապետելու մոտեցում», համաձայն որի, հանձնարարությունները պետք է լինեն դժվար, բայց ոչ խրթին:

Դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ձևավորվել են ԱՈԻՊ –ներ՝ անհատական ուսուցման պլաններ: Անհատական ուսուցման պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց:
Դասարանում համընդհանուր ձևավորման կիրառման համար ուսուցիչներից պահանջվում է երկու կարևոր հանձնառություն: Առաջինը՝ դասերին պատշաճ կերպով նախապատրաստվելու համար ուսուցիչները պետք է ճանաչեն իրենց սովորողների կարիքները: Երկրորդը՝ ուսուցիչները պետք է որոշակի ժամանակ հատկացնեն դասի ներկայացման, աշակերտներին արտահայտվելու հնարավորություն ընձեռելու և դասապրոցեսում ընդգրկելու բազմահնար միջոցները նախապես պլանավորելու համար: ուսուցիչները պարբերաբար ստանում են ղեկավարների օժանդակությունը:
Աշխատանք է տարվում, որ ուսուցման գործընթացի լավ ձևավորման (ոչ թե զուտ լավ դասավանդման) համար ուսուցիչները մշտապես գնահատեն իրավիճակները՝ ապահովելու հարգանքը սովորողների կրթության իրավունքների նկատմամբ և մշտապես պլանավորեն նրանց կրթական կարիքների բավարարումը,միշտ պատրաստ լինեն փոփոխելու իրենց պլանները, եթե դրանք արդյունավետ չեն: Նյութի ներկայացման, սովորածն արտահայտելու և աշակերտներին դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների վերջնական նպատակն այն է, որ դրանք մատուցվող նյութը հասանելի ու հասկանալի դարձնեն աշակերտների համար՝ նպաստելով ինքնուրույն սովորելուն:
Համընդհանուր ձևավորումը ուսուցումը պլանավորելն է: Խրախուսվում են այն ուսուցիչները,ովքեր մտածում են ուսուցման այնպիսի պլանավորման մասին, որը աշակերտներին հնարավորություն է տալիս բազմազան ձևերով սովորել նոր հասկացություններ
Համընդհանուր ձևավորմամբ նախատեսվում է դասի պլանի կազմում յուրաքանչյուր սովորողի համար, ինչը պահանջում է հոգատարություն և հասանելիության ապահովում բոլորի համար: Սովորողները կարող են տեղեկատվություն ստանալ զանազան ձևերով: Դրանք կարող են լինել տեսողական, լսողական, շոշափելու կամ մուլտիմեդիայի միջոցով: Աշակերտներին տեղեկատվությունը բազմազան միջոցներով փոխանցելը ապահովում է նյութի մատչելիությունը: Սովորողները կարող են իրենց յուրացրածը արտահայտել զանազան ձևերով: Դա կարող է լինել գրելու, խոսելու, թատերական ներկայացման, արվեստի կամ ցուցադրման այլ եղանակներով: Իրենց գիտելիքները ցույց

տալու համար սովորողին տրամադրվող բազմազան ձևերը մեծացնում են սովորածը արտահայտելու հնարավորությունը: Աշակերտների մեջ հարկավոր է հետաքրքրություն առաջացնել սովորելու նկատմամբ: Յուրաքանչյուր սովորողի բնորոշ է զարգացման, առաջադիմության ուրույն մակարդակ, սովորելու սեփական ոճ և ընդունակություններ: Հարկավոր է կիրառել սովորողներին հետաքրքրող տարբեր ձևեր՝ սովորելու նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու համար:Համընդհանուր ձևավորմամբ կազմակերպված դասարանում, առանձին աշակերտների դեպքում կարող են պետք գալ լրացուցիչ նյութեր ու սարքավորումներ: ՈՒՀՁ-ի նպատակն է գնալ բոլոր սովորողների կրթական կարիքներին ընդառաջ, սակայն որոշ սովորողներ միևնույնն է ունեն անհատականացված մոտեցման կարիք:

Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժահոգեբանական թիմը շատ լավ է պատկերացնում, որ ներառական կրթության ներդրումը պահանջում է ավանդական գործելակերպի փոխարինում այլ մոդելներով, ընդունում է, որ միմյանց և ընտանիքների հետ համագործակցությունը պահանջում է նոր մտածելակերպ և հաղորդակցման ուժեղ հմտություններ: Համագործակցության համար անհրաժեշտ հմտությունները ուսուցիչներին օգնում են բոլոր աշակերտներին և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին օժանդակելու հարցում:

2021 թվականի դեկտեմբեր ամսին ուսուցիչներին հատկացվել է հավելավճար՝ աշխատավարձի 30 տոկոսի չափով:

2021թ ձեռք է բերվել նոր սերնդի 2 համակարգիչ:

2022թ ձեռք է բերվել խոտհնձիչ:

2022թ նոյեմբերից տնտեսված միջոցների հաշվին բարձրացվել է ուսուցիչների դրույքաչափը և աշխատակիցների աշխատավարձը:

2022թ վերանորոգվել է տարրական մասնաշենքի տանիքը, 2023-ին՝ ուժգին քամուց վնասված տանիքի հատվածները:

2021-2022 ուսումնական տարում դպրոցը տվել է մեդալակիր շրջանավարտ, որի համար շնորհակալագիր է ստացել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից, պարգևավճարներ են ստացել դասավանդող ուսուցիչները, իսկ դպրոցը ստացել է ինտերակտիվ երկու գրատախտակ ձեռք բերելու հնարավորություն:

2023թ հունվարին դպրոցը ձեռք է բերել ինտերակտիվ երկու գրատախտակ՝ 1800000 ՀՀ դրամ արժողությամբ:

Ժամանակին և ըստ հերթայնության իրականացվել են մանկավարժական կադրերի վերապատրաստումները:

Մանկավարժական կազմը համալրվել է երիտասարդ կադրերով:

13.1. Հաշվետու ժամանակաշրջանում հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետբյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրի 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանների՝ կախված սովորողների թվից, ավելացրած պահպանության ծախսերը: 2023թ սեպտեմբերից ֆինանսավորումը կիրականացվի դասարան թվով: Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության յուրաքանչյուր տարվա նախահաշիվը կազմվել է սահմանված կարգով՝ պահպանելով հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջները:

Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի կողմից հաստատության յուրաքանչյուր տարվա ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատվելուց հետո տեղադրվել է դպրոցի ինտերնետային կայքում/ վեբ կայք՝ http:// **tsovagyugh.schoolsite.am:**

Կայքում տեղադրվել են հաստատության եռամսյա հաշվետվությունները: Ամբողջ ժամանակաշրջանում հաստատությունն աշխատել է առանց վարչական խախտումների:

Վստահորեն կարող եմ ասել, որ հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը եղել է հստակ և թափանցիկ:

Շնորհիվ սովորողների թվի աճի՝ (2018 թվական՝ 512 աշակերտ, 2023 թվականին՝ 529 աշակերտ) անցած 5 տարիների ընթացքում բարելավվել է դպրոցի ֆինանսական վիճակը՝ 90924100 հասնելով 114288400 ՀՀ դրամի:

Ուսուցիչների դրույքաչափը (0-15 տարի ստաժ) 113000- ից դարձել է 115666, (15 տարի և ավել) 120165-ից՝ 123000 ՀՀ դրամ:

Պետք է հայթայթել ֆինանսական լրացուցիչ միջոցներ՝ պահպանելու գոնե այսօրվա ձեռքբերումները՝ վերակառուցված դպրոց, նոր գույք, շուրջօրյա ջրամատակարարում, լոկալ ջեռուցում, բարեկարգ բակ, ուսուցիչների հնարավորինս բարձր դրույքաչափ, արհեստավարժ աշխատակիցներ, կարգապահ աշակերտներ, դպրոցի, ծնողական, աշակերտական ակտիվ, բանիմաց խորհուրդներ և այլն:

Պահպանման օրեցօր աճող ծախսերն ապահովելու համար.

- Կներդրվեն կրթական լրացուցիչ ծրագրեր, որոնք կդրվեն մանկավարժական, աշակերտական և ծնողական կազմակերպություններում լայն քննարկման, կներկայացվեն դպրոցի խորհրդին:
- Կկազմակերպվեն վճարովի կրթական ծառայություններ:
- Կկազմակերպվեն արտադպրոցական դաստիարակության ծառայություններ:
- Հնարավորություն կստեղծվի հետագայում իրականացնել ուսումնաարտադրական գործունեություն և արտադրանքի իրացում:

Բյուջեից տնտեսված և արտաբյուջետային միջոցները նպատակաուղղել.

- Դպրոցի պահպանման խնդիրներին:
- Դպրոցական և լաբորատոր նոր սարքավորումների ձեռքբերմանը: Այսօր դպրոցում ստեղծվել են բնագիտական լաբորատորիաներ, որից օգտվում են և կօգտվեն բոլոր աշակերտները, ուսուցիչները և շահագրգիռ անհատները, որոնցից.
- Համակարգչային լաբորատորիաների տեխնիկական միջոցների վերազինմանը:

Ստորև ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի ֆինանսատնտեսական գործունեության 2018 և 2023 թվականների հաստատված նախահաշիվները, որոնք խոսում են հաշվետու ժամանակաշրջանում դինամիկ ձևով աճած ֆինանսական հնարավորությունների մասին, որը արդյունք է դպրոցի առջև դրված առաջնահերթ խնդիրների հետևողական լուծման:

<<Հաստատում եմ>>

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

"11" 2018թ.

Եկամուտների և ծախսերի նախահաշիվ

2018 թվական

1. Կազմակերպության անվանումը <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն

2. Ծրագրի անվանումը և կոդը Հանրակրթական ուսուցում 02

3. Նախահաշվի գումարը թվերով և տառերով 102361.6 /մեկ հարյուր երկու միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր դրամ/

4. Չափի միավորը՝ հազար դրամ

NN	Միջոցների գոյացման աղբյուրները և դրանց հաշվին իրականացվող ծախսերը ըստ հոդվածների	Հոդվածի N	Նախահաշվով հաստատված ցուցանիշները
1	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		102361.6
1.1	Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին		11437.5
1.2	Ընթացիկ տարվա մուտքեր, որից՝		
	ա. Պետական բյուջեից		90924.1
	բ. այլ եկամուտներ		
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		102361.6
	ԾԱԽՍԵՐ		
	Ա. Ընթացիկ ծախսեր		
1	Աշխատողների աշխատավարձ ընդամենը		80700.0
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից՝		80700.0
	ա. աշխատողների աշխատավարձեր և հավել ավճարներ	4111	80700.0
	բ. պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	
2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում՝		
2.1	Շարունակական ծախսեր		8300.0
	Գործառնական և բանկային ծառայություններ	4211	
	Էներգետիկ ծառայություններ, որից՝	4212	
	ա. էլ. էներգիա		1000.0

	ի Ջեռուցման ծախսերից՝		
	գազ		7000.0
	հեղուկ վառելիք		
	վառելափայտ		
	-կոմունալ ծառայություններ, որից՝	4213	
	աղբահանություն		100.0
	ջրամատակարարում և ջրահեռացում		
	-նավի ծառայություններ, որից՝	4214	
	ֆիքսված հեռախոս		
	ինտերնետկապ		200.0
	-ապահովագրական ծախսեր	4215	
	-գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	
2.2	գործուղումների և շրջագայությունների ծախսեր		180.0
	-ներքին գործուղումներ	4221	80.0
	-այլ տրանսպորտային ծախսեր	4229	100.0
2.3	*պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում*		796.0
	-վարչական ծառայություններ	4231	70.0
	-համակարգչային ծառայություններ	4232	200.0
	-աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	60.0
